

11384

3(02)
F-16.

1927

3(075)

Կ-65

3391

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՑՆԵՐ

ՔԱՂԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ 13 ԴԱՍ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ

ԽԱՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒԹ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

572

3(02)

♀-16.

25 SEP 2006

F1 DEC 2009

1-0

ԲԱԼԱԲԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ 13 ԴԱՍ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հաս Վ., ՎԻՐՊԱՆՍԿՈՒ

ՊՐԱԿ I

339
1326

ԽԱՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1927



29 AUG 2013

11384

Напечатано в типогр. Госиздата
„Красный Пролетарий“
Москва, Пименовская
ул., д. № 16, в коли-
чест. 5000 экз.
Главлит
№ 64090.

Ի՞ՆՉՈՒԵՍ ՊԵՏՔ Ե ԱՅՍ ԳՐՔԻՑ ՈՒՏՎԵԼ.

(Մերոդական ցուցմունքներ)

Այս գիրը կազմված է այնպես, վոր դյուրին լինի կարդա-
ցածը գործնականապես մշակել: Այս գըքի բոլոր յերեք պրակները
պարունակում են ընդամենը 13 զրույց, յուրաքանչյուր զրույցը—
մոտ քան եջ: Զրույցներից ամեն մեկը կարող է կարդացվել
և մշակվել մոտ 2—2½ ժամվա ընթացքում: Ուրեմն, ով ուզում է
այս գըքով պարապել, առաջուց կարող է նկատի ունենալ. թե
ինչքան ժամանակ պետք կլինի և թե վոր ժամերին ավելի հար-
մար կլինի պարապել: Բայց այդ բավկական չե: Յուրաքանչյուր
ընթերցումն, ավելի լավ յուրացնելու համար, բաժանել ենք
մի քանի մասերի և ամեն մի մասից հետո, կրկնողության հա-
մար, տրված են հարցեր: Յեթե գիրը կարդացողը կարողանա
այդ հարցերին պատասխանել, նշանակում է նա կարդացածը հաս-
կացել ե, յուրացը կ և կարող է ընթերցումը շարունակել: Իսկ
յեթե չկարողանա հարցերին պատասխանել, նշանակում է պետք
ե կրկին կարդա հարկավոր եղերը և այդ մասին լավ խորհի:

Բացի հարցերից, ամեն մի զրույցից հետո տրված են գործ-
նական խնդիրներ՝ կարդացածը մշակելու համար (3—4, յերեմն
և 5): Այդ չի նշանակում, վոր պետք ե այդ բոլորն ել կատա-
րել: Կարելի յե ընտրել 1—2 ավելի հարմար խնդիրներ և դրանք
մշակել ինչպես հարկն ե:

Այս գըքով կարող է պարապել ամեն մեկը առանձին, բայց
ավելի լավ կլինի պարապել փոքրիկ խմբակով, 8—10 մարդով:
Այդ դեպքում ավելի հեշտ կլինի բոլոր գործնական խնդիրները

լուծել և արված հարցերին պատասխանել: Յեզ իսկապես՝ վերցնենք թեկուղ հարցերին տրվելիք պատասխանները. մեկը չգիտե՞թե ինչպես պետք ե պատասխանել, իսկ մյուսը՝ գիտե, յերբորդը ելի մի բան կավելացնի, և այլն. և այսպես, հարցի մանրամասն պատասխանը ստացվում ե, հարցը քննվում ե ամեն կողմից և պարզ կացուցվում նրան, ով այդ չի հասկանում:

Յեզ կամ վերցնենք վորևե գործնական խնդրի կատարումը: Որինակ, գյուղիորհուրդների աշխատանքին վերաբերյալ զրոյցից հետո այսպիսի խնդրի ե տրվում՝ «Գյուղիսորհրդի կամ գավառամասային խորհրդի աշխատանքներին մասնակցող ձեր ներկայացուցիչներին առաջարկեցնեք զեկուցում կարդալ խորհրդի գործներության մասին ե քննեցնեք, արդյոք նրանք ուղիղ են տարել աշխատանքը»: Կարելի՞ յե այդ խնդրը կատարել՝ յեթե գրքի վրա մեկ մարդ ե աշխատում: Իհարկե վո՞չ: Իսկ յերբ գիրքը մշակում ե մի խմբակ, այդ դեպքում միշտ ել կարելի յե խնդրել խորհրդում աշխատող ընկերներին՝ պետք յեղած զեկուցումն անելու: Այդպես և ուրիշ դեպքերում: Այս գրքի՝ կոլլեկտիվ յեղանակով կատարած մշակումը շատ ավելի ոգուտ ե տալիս, քան առանձին կարդալիս և մշակելիս: Ընթերցումն ևս շատ ավելի ուրախ, զվարթ կանցնի, յերբ կմասնակցեն մի քանի մարդիկ: Պետք ե կարդալ բարձրաձայն, մեկը հոգնեց—կարդա մյուսը, նրանից հետո—յերբորդը և այլն: Կարդացածի շուրջը տեղի յեն ունենում մտքերի փոխանակություններ, վիճաբանություններ, և դրա շնորհիվ նյութը ավելի լավ ե մարսվում, առորյա խնդրների հետ կապվում:

Ամեն տեսակի պարապմունք կարող ե ոգտակար լինել այն դեպքում, յեթե այդ տեղի յե ունենում հաջորդաբար, կանոնավոր, վորոշ որերին ու ժամերին, և յեթե բոլոր պարապողները իմանում են, թե իրենք ինչ պետք ե անեն այս կամ այն պարապմունքի ժամանակ: Ահա թե ինչու, յերբ խմբակը հավաքվում է, ամենից առաջ պետք ե վորոշել թե վոր որերին ու ժամերին պետք ե պարապել: Փորձը ցույց ե տալիս, վոր ամենից լավս ե պարապմունքները նշանակել շաբաթը մեկ անգամ և ճիշտ վորոշել որն ու այդ մասին հայտնել խմբակի անդամներին: Հենց այդ ժողովում ել պետք ե վորոշել պարապմունքի ժամերը: Վերեւում ասացինք, վոր ամեն մի պարապմունքի համար պահանջվում ե

2—3 ժամ, բայց խմբական պարապմունքի դեպքում կպահանջվի $\frac{3}{2}$ —3 ժամ: պիտի նշանակել մոտավորապես այսպիս—«պարապելու յենք յերեկոյան ժ. 5—8-ը» կամ՝ «յերեկոյան ժ. 6—9-ը» և այլն: Պետք ե գալ ճիշտ նշանակված ժամին, դա—մարդուս սովորեցնում ե ճշտավահ լինել նաև ուրիշ գործերում, իսկ ճշտապահությունը մեզ շատ անհրաժեշտ ե:

Գնալով պարապմունքի, ամեն մեկը իր հետ պետք ե վերցնի տեսրակ, մատիտ: Հսկելու համար, թե խմբակի անդամները արդյո՞ք կանոնավոր են այցելել, ինչպես և պարապմունքի ժամերի մասին նրանց հիշեցնելու համար՝ պետք ե ընտրել խմբակի մշտական քարտուղար: Ամենից լավս ե՝ այդ աշխատանքի համար առաջ քաշել այնպիսի յերանդուն ընկերոջ, վոր նախ ինքը ճշտապահ լինի և ուրիշներին ել սովորեցնի:

Բացի հիշյալ գործերից, քարտուղարի վրա պարտականություն ե գրվում վարել պարապմունքի մատյանը, ընտրել և ձեռքբերել պիտույքներ (քարտեզ, պլակատ, բառարան), նախապես հոգալ պարապմունքի տեղի մասին:

Վորպեսզի պարապմունքները կանոնավոր անցնեն, վորպես զի շատ ժամանակ չվատնվի, պետք ե ամեն մի պարապմունքի համար ընտրել առանձին նախագահ: Նախագահը պետք ե հետևի, վոր խմբակի անդամները ակտիվ մասնակցություն ունենան, կարդան հերթով, հարցերին պատասխանեն, մասնավոր խոսակցությամբ չզբաղվեն:

Հարկավոր գրքեր ձեռք բերելու, գրադարանների հետ կապ պահպանելու համար պետք ե ընտրել խմբակի գրադարանապետ: Այդ ընկերը պետք ե ուղաղրությամբ հետևի, վոր ընթերցանության համար խմբակի անդամների վերցրած գրքերը ժամանակին վերադարձվեն:

Ընտրելով քարտուղար, գրադարանապետ, նախագահ, խըմբակի ամեն մի անդամը պետք ե կատարի նրանց ցուցմունքները, խմբակում սահմանված կարգերին յենթարկվի: Միայն այս դեպքում խմբակի պարապմունքը տեղի կունենա կանոնավոր և ոգտակար կլինի:

Յենթարկենք թե խմբակը կազմակերպված ե և նշանակված որը հավաքվել ե պարապմունքի: Ինչի՞ց սկսել:

Նախագահը տալիս ե խմբակի անդամներից վորեև մեկի անունը, և նա սկսում ե բարձր կարդալ առաջին զրոյցի առա-

Ջին հատվածը՝ «Մեր յերկրի հարստությունները»։ Մեկը կարգում ե, իսկ ի՞նչ են անում մնացածները։ Յեթե ելի զբքեր կան (իսկ լավ կլիներ, վոր ուրիշներն ել նույն գրքից ունենային, գունեամ 3 հոդուն—մեկ գիրք), խմբակի անդամները գրքով հետեւ վում են կարդացողին, նշանակում են անհասկանալի բառերը։

Հատվածը կարդացված եւ նախագահը հարցնում ե—ով ինչ հարցեր ունի. Հարցերին պատասխանում են խմբակի անդամները։ Յեթե վորեւ հարց անպատասխան ե թողնվել, դա պետք ե նշանակել տետրակում՝ խճիթավարին կամ ուսուցչին հետո հարցնելու համար։ Այսուհետև պետք ե անցնել հատվածի վերջում արված հարցերի քննությանը։

Այդ ձևով՝ ամբողջ զրույցը մինչև վերջ մշակվում եւ Տետրակում բացի անհասկանալի բառերից, պետք ե նշանակել այն, ինչ հարկավոր ե հիշողության մեջ պահել, որինակ՝ քաղաքների անունները, վորոշ թվեր և այլն։ Այն, ինչ գրվում ե, ավելի հաստատ ե մտքում պահվում։ Ահա թե ինչու ավելի լավ ե պարապմունքի վերջում տետրակում նշանակել մոտավորապես հետեւյալը—այսոր յես տեղեկացա այսինչ-այսինչ բաների մասին, ինձ համար նորություն ելին այսինչ հարցերը։ Այսպիսի կարճ գրանցումները վոչ միայն կողմնեն կարդացած հիշողության մեջ պահելու, այլև հարկավոր կլինեն հետո՝ յերբ ամբողջ գիրքը կարդացված կլինի։ Այդ գրանցումների ոգնությամբ հեշտ կլինի կըրկնել, հեշտ կլինի վորոշել, թե վոր հարցերի վրա կրկին պետք ե կանգ առնել, նորից մշակել։

Յերբ զրույցը վերջացած կլինի և գրանցումը կատարված, պետք ե քերդվել զրույցի վերջում արված գործնական խնդիրներով և գրանցից ընտրել, ինչպես վերեւում ասացինք, ավելի հարմարը։ Խմբակի անդամները իրենք ևս կարող են իրենց համար գործնական աշխատանք գտնել։ Ընտրված խնդիրը պետք ե քննել ինչպես հարկավոր ե՝ դրա մշակումը բաշխելով խմբակի անդամների միջև։ Այսպես, որինակ, հարկավոր ե վերացնել անգրադիտությունը կոմյերիտմիության անգրագետ անդամների շրջանում։ Այդ դեպքում մեկին պետք ե հանձնարարել պարզելու, թե քանի անդամ են անզրագետ և ովքեր, մյուսին պետք ե հանձնարարել պարզելու, թե քանի անդամ են անզրագետ և ովքեր, մյուսին պետք ե հանձնարարել ձեռք բերելու նրանց համար այբբենարաններ, յերրորդին—համաձայնության գալ գրագետների հետ, թե սրանցից ով և ինչպես (առանձին թե խմբական յեղանակով) կպարապի անգրադիտ-

ների հետ, չորրորդին—հետևել այդ գործին և այլն։ Հենց այստեղ ել պետք ե վորոշել թե վորքան ժամանակում և առաջադըրված խնդիրը կատարվելու։

Լրացուցիչ զբքերի ընթերցումը պետք ե տեղի ունենա ինքնուրույն։ Միայն ցանկալի յե, վոր ամեն մեկը իր կարդացածի մասին իր ընկերներին պատմե, նրանց մեջ ևս հետաքրքրություն զարթեցնի գեպի ընթերցանությունը։

Բոլոր զրույցների մշակումը կատարվում է այս ձևով։

Քաղաքական գրագիտությունը հարկավոր ե նրա համար, վորպեսզի մարդ կարողանա քաղաքական դեպքերը հասկանալ և դրանցում գիտակից մասնակցություն ունենալ։ Ուստի և պետք ե կարողանալ գիտեցածը կապել ընթացիկ դեպքերի հետ, շրջապատող կյանքի հետ։ Դրա համար ել՝ շատ լավ կլինի, վոր պարապմունքի ժամանակ, ըստ հնարավորության, ոգտագործվեն նաև լրագրական նյութեր, Այսպես, որինակ, զյուղական տնտեսության վերաբերյալ զրույցը մշակելիս, նրա այն մասը, ուր ասվում ե՝ թե քանի գեսետին հող ե ցանված 1925—1926 թ.,— լավ կլիներ այդ տեղեկությունները լրացնել նոր տվյալներով (վորոնք լույս են տեսնում լրագրներում), իմանալ, թե 1926 թվի աշնանը քանի՞ գեսետին հող ե հերկված, իսկ ավելի լավ կլիներ լրագրներից տեղեկանալ, թե ինչ չափով ե աճում ցանքսի տարածությունը գավառում, գավառամասում։ Ենք կամ տեղի յեռնենում, որինակ, մեր արցունաբերության զարգացման վերաբերյալ զրույցը։ Լրագրներում այժմ շատ են զրում այդ մասին։ Պետք ե ընտրել վերջին թարմ հողվածը և պարապմունքից հետո կարդալ։ Այդ դեպքում զրքից ձեռք բերած տեղեկությունները կկապվեն նրա՝ հետ, ինչ կատարվում ե ներկայումս։ այդպիսով լրագիրն ևս ավելի հասկանալի կդառնա։

Լրագրական նյութը պետք ե ընտրի խմբակի ամեն մի անդամ, բայց քարառելարը պարտավոր ե հակել, վոր այդ կատարվի։

Թե Խորհրդային Միության մաշտաբով, թե Խորհրդային Հայաստանի և թե սրա ամեն մի գավառի ու գավառամասի մաշտաբով ամեն անսակելի թարմ ավլաներ միշտ ել կարելի յե գըտնել «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Ավանդարդ» լրագրներում, «Գյուղատնտեսական կյանք» և այլ թերթերում։

Խմբակում լրագրներ կարդալը լավ ե. բայց այդ բավական չե, պետք ենակ աշխատակցել լրագրներին, լրագրների մեջ գրել խմբակի պարապմունքների մասին, գրել՝ թե վոր հարցերի մասին կուզեյին հոդվածներ տեսնել լրագրներում:

Քարտուղարի պարտականությունների մասին խոսելիս, մենք ասացինք, վոր քարտուղարը պետք ե վարե պարապմունքների հիշտակարանը:

Պարապմունքների հիշտակարանը—դա համառոտ գրանցումն ե այն մասին, թե ի՞նչպես ե անցել այս կամ այն պարապմունքը, ինչո՞վ են զբաղվել այս կամ այն պարապմունքի ժամանակ. այդպիսի հիշտակարանը լավ հայելի կլինի հենց իրեն՝ խմբակի համար և բջիջին կողմի՝ դավառամասային կամ դավառային կազմակերպությանը հաշիվ տալու գործում:

Ի՞նչ պետք ե գրել հիշտակարանում:

Ամենից առաջ—որը, ամսաթիվը և տարեթիվը (որինակ՝ յերկուշաբթի, 25 նոյեմբերի 1926 թ.), քանի մարդ են ներկայել (որինակ՝ 10) և ովքե՞ր, ո՞վ ե նախագահել (այս ինչ ընկերը), վո՞ր զրույցն են կարդացել (որինակ՝ չորրորդ զրույցը—ԽՍՀՄ արդյունաբերության մասին), խմբակը գորքա՞ն ժամանակ ե պարապել (սկսել են յերեկոյան ժ. 6-ից, վերջացրել ժ. 9-ին), ի՞նչպիսի հարցեր են առանձնապես հետաքրքրել խմբակին (դրանք գրի առնել): Ահա և ամենը: Փոքր գործ ե, իսկ զրա ոգուտը մեծ կլինի: Այդ պետք ե անել և նրա՛ համար, վոր յերբ նման շատ զրանցումներ կատարված կլինեն, կարելի կլինի վորոշել, թե ինչ չափով հաջող ե կազմված այս գիրքը,—ի՞նչ չափով ե հասկար նալի, արդյո՞ք դա հնարավոր ե մշակել նշանակված ժամկետի ընթացքում (13 շաբաթ), արդյո՞ք պարապմունքի ժամանակ ոդում են գրքի մեջ տրված հարցերը և այլն: Պարապմունքները վերջացնելուց հետո հիշտակարանը անպայման պետք ե ուղարկել դավառային կազմակերպությանը:

Այնտեղ, ուր այս կամ այն պատճառով հնարավոր չի լինի կազմակերպել թեկուղ մի փոքրիկ խմբակ, առանձին կոմյերիտականները ստիպված են այս գիրքը մշակել մենակը: Ուստի և անհրաժեշտ ե մի քանի խորհուրդներ եւ այդպիսին երին տալ:

Ամենից առաջ՝ մենակ պարապողն ևս, ինչպես և խմբակը, պետք ե ճիշտ վորոշի, թե շաբաթվա մեջ քանի ժամ կարող ե հատկացնել պարապմունքի, և պետք ե ճշտապահությամբ այդ կատարի: Ամեն անգամ մեկ զրույցից ավելին մշակել հարկավոր չե, սակայն դա պետք ե մշակել ինչպես հարկն ե, լավ մարսել տեսրակի մեջ գրելով այն ամենը, ինչ պետք ե ճիշտողության մեջ պահել: Մենակ պարապողը ավելի շատ բան պետք ե գրի առնի, քան խմբակային պարապմունքին մասնակցողը, զրույցինետև նա հնարավորություն չունի այդ մասին ուրիշի հետ մտքերի փոխանակություն ունենալու ու այդպիսով իրեն ստուգելու: Մենակ պարապողն ևս, ինչպես և խմբակային պարապմունքին մասնակցողը, կարդալուց հետո պետք ե գրի առնի, թե ինքն ի՞նչ բանի մասին տեղեկացավ, ինչո՞վ հետաքրքրվեց և այլն: Այն դեպքերում յերբ զորկե հարց անհասկանալի յե մնում, պատասխանը պետք ե խնդրել խրճիթավարից, ուսուցչից, գրադարանապետից, ավելի զարգացած ընկերներից: Յերբեք չպետք ե ճնշվել՝ այս կամ այն անհասկանալի հարցի մասին բացատրություն խնդրելու: Չի հարցնում միայն նա, ով վոչ մի բանի մասին չի մտածում:

Այս զրույցները կազմված են ԼԿԹԵՄ կենտրոնական կոմիտեյի ագիտ-բաժնի խմբագրած նյութերի (ձեռագիր) հիման վրա: Զրույցները կազմված են ԽՍՀ Միության մաշտաբով, սակայն տեղ-տեղ պատշաճ հապավումներ և լրացրումներ անելով՝ հարմարեցրած ենք ևն. Հայաստանի պայմաններին:

—

ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ.

ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Մեր յերկիրը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ բռնում է 20 միլիոն քառակումի վերստ տարածություն, վոր յերկրագնդի ցամաքի $\frac{1}{6}$ մասն և կազմում: ԽՍՀՄ Յեվրոպայից յերկու անգամ մեծ է: Յեթե վերցնենք աշխարհի ամենամեծ յերկրները (բացի Մեծ Բրիտանիայից), իր տարածությամբ ամենամեծ յերկրը մերը կլինի:

ԽՍՀՄ-ում ապրում են հարյուրից ավելի ժողովուրդներ: Մեր յերկիրը մեծ մասով հարթավայր է, վոր շատ բերբի և հարմար ե յերկրագործության համար: Ահա թե ինչու ժողովրդի մեծ մասը պարապում ե յերկրագործությամբ: Գյուղատնտեսությունը ամենատարածված պարապմունքն է մեր յերկրում: Ժողովրդի 70% պարապում է հողագործությամբ: Մեր գյուղացին յերկիրը մշակում է մեծ մասամբ հասարակ գործիքներով՝ գութանով, արորով: Հողի մշակումը մեզ մոտ ամեն մի ընտանիք (ծուխ) կատարում է առանձին: Այդպիսի ծխերի թիվը ԽՍՀՄ մեջ 22 միլիոնի յե համառւմ:

Մեր հողի մեծ մասի վրա գյուղացիները պարապում են հողագործությամբ։ Հսկայական տարածություններ են բռնում անտառները։ Ժողովուրդը պարապում է նաև խաշնարածությամբ։ Բայց այդ դեռ բոլորը չե։ Իսկական և թանկարժեք հարստությունները պահպաժ են յերկրի խորքերում։ Այդտեղ զտնված ածուխի հանքերը, յերկաթը, պղինձը, վուկին և այլ մետաղներն ու հարստությունները դեռ լավ ուսումնասիրված չեն։ Իսկ իո՞քան հարստություն կա յերկրի խորքերում։ ԽՍՀՄ-ի մեջ արդյունաբերվող նավթի քանակը, բացի Ամերիկայից, վոչ մի յերկիր չունի։

Մեր յերկրի բնական հարստությունները մեզ հնարավորություն են տալիս նորանոր գործարաններ կառուցել։ Իսկ այնտեղ, վորտեղ շատ գործարաններ կան, կյանքն ավելի հեշտանում ե և լավանում։ Յերկրագործության համար շինվում են նոր մեքենաներ, վորոնցով գյուղացին իր արտերն ե ցանում ու հնձում՝ ստանալով ավելի առատ հունձ։ Գործարաններում նոր և շատ ապրանքներ են պատրաստվում, վորոնք շոկայում ծախվում են։ Ելեքտրական եներգիան լուսավորում ե տները, փողոցները, շարժում ե գործարանների մեքենաները։

Այժմ անցնենք մեր տնտեսության գլխավոր մասերին։ ՀԱ. Բ. ՁԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ մեծության ե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

Ի՞նչ ժողովուրդներ են բնակվում մեր յերկրում (վորոնց դուք գիտեք)։ Գլխավորապես ինչո՞վ են զբաղվում Խ. Ա. Հ. Մ. Ժողովուրդները։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՑԵՎ Ի՞ՆՉ Ե ՆԱ ՏԱԼԻՄ
ՄԵՐ ՑԵՐԿՐԻՆ.

Յերկրագործությունը առաջին հերթին կախում ունի բնության պայմաններից։ Համեմատեցեք, որինակի համար, հյուսիսային նահանգները (Արխանգելյակու, Վոլոգդակու) հարավայինների հետ (Նըմի, Կուբանի)։ Վոլոգդակու նահանգն իր մեծությամբ հավասար է հարավային չորս հինգ նահանգին։ Այստեղ 100 գեսետին հողի միայն 2-ն եցանքսի համար, իսկ Կուբանում՝ 100-ից 55-ը։

Այդ ե պատճառը, վոր Վոլոգդակու նահանգում տարեկան հավաքում են 33 միլիոն փութ հացահատիկ, իսկ հարավում՝ նույն տարածությունից հավաքում են 620 միլիոն փութ հացահատիկ։

Վոլոգդակու նահանգում բանում են գլխավորապես հաճար և վարսակ, իսկ հարավում՝ գարի և ցորեն։

Նայեցեք քարտեզին։ Մեր հիշած Վոլոգդակու նահանգից հյուսիս գտնվում ե Արխանգելյակի նահանգը։ Մի քիչ գեպի արևելք՝ գտնվում ե Կոմի (Զըրյան) ավտոնոմ շրջանը կամ Յակուտիա հանրապետությունը։ Այդ մասերում են գտնվում մեր անտառային հարստությունները։ Այստեղ հողագործությամբ զբաղվել չի կարելի։ Մասնակիության մասերի բնակիչներն զբաղվում են ձկնորսությամբ և վորոնցությամբ։

Նայեցեք նորից քարտեզին։ Աշխներդ գարձեք դեպի Կասպից ծովը։ Նայեցեք դեպի Արևելք։ Այստեղ են գտնվում մեր հետեւյալ հանրապետությունները՝ Ղազախստան, Ռուզբեկստան և Թուրքմենստան։ Այս յերկրներում կլիման տաք ե։ Հարյուրավոր վերստերով են ձգվում ավագոտ դաշ-

տերն ու անապատները։ Տեղական ժողովուրդը պարապում է զլիավորապես անամսապահությամբ, պարտիզանությամբ, նաև մշակում է բամբակ, վորից գործարաններում կտօրեղեններ են պատրաստում։ Արհեստականորեն վոռոգվող հողամասերում զբաղվում են այգեգործությամբ, ինչպես և թութունի մշակությամբ։ ԽՍՀՄ մեջ գործածվող բամբակը ստացվում է այսոեղից և մասամբ ել Անդըրկովկասից։

ԽՍՀՄ յերկրագործության զլիավոր մասը կազմում է հացահատիկների տնտեսությունը՝ ցորենի, գարու, հաճարի, վարսակի մշակությունը։ Բավական զարգացած է մեղմոտ նաև անամսապահությունը՝ լծկան և կաթնատու անասունների, խոզի և այլ կենդանիների բուծումը։ Մեզ մոտ շատ թույլ ե դրված արդյունաբերական-տեխնիկական բույսերի մշակության գործը, այն ե՝ կտավատի, թութունի, արևածաղկի, բամբակի, շաքարի ճակնդեղի մշակումը։ Որինակի համար՝ մեր մշակած բամբակի քանակն այնքան քիչ ե, վոր չի կարող բավարարել մեր գործարանների կարիքը։ Մենք ստիպված ենք արտասահմանից բերել թանկ գնով բամբակ։

Յերկրագործության զարգացումը, բացի բնության պայմաններից ու կլիմայից, կախված է նաև յերկրի ճանապարհների դրությունից, գործարանների քանակից։

Կան շրջաններ, վորտեղ զյուղից քաղաք գալու համար վոչ ճանապարհ կա, վոչ նույնիսկ խճուղի։ Իսկ զյուղերից քաղաք գնալու համար յերբեմն հարկավոր են որեր, շաբաթներ։ Գյուղացիք այդ տեղերում վոչ գնել վմչ ծախել կարող են։ Այդ շրջանների զյուղիությունը փողի յերես չի տեսնում, քաղաքից ապրանք չի ստանում, այլ ամեն ինչ ինքն ե պատրաստում իր համար։ Այդպիսի շրջանների զյուղիներն ասում են. «Իմ ի՞նչ

գործն ե՝ թե շատ կամ քիչ գործարաններ կան։ Միևնույն ե՝ յես նրանցից վոչ մի կախում չունեմ»։

ԽՍՀՄ 22 միլիոն զյուղացիական տնտեսություններից գեռ շատ շատերը պատկանում են այդ տեսակ թույլ տնտեսություններին։ Զե՞ վոր կան զըրյաններ, յակուտներ, սամոյեցներ, վորոնցից շատերը մինչև այսոր լուցկու փոխարեն կայծաքար են գործածում, նավթի տեղ՝ մարիս ույուղ, ասեղի փոխարեն՝ ձկան վոսկոր, իսկ գազաններին՝ բըռնում են թակարդներով, վորովհետև նրանք չեն կարող գործածել հրացան, ծանոթ չեն վառողի հետ։

Մի՞թե Հայաստանի զյուղացին, վոր մինչև հիմա ապրում է նույն պայմաններում, ինչ պայմաններում աշխատում եր նրա պապը, շա՞տ ե առաջ գնացել մյուս ժողովուրդների զյուղացիներից, վորոնք իրե՛նք են ամեն ինչ պատրաստում՝ սկսած հացից մինչև հագուստեղենը։ Կարո՞ղ ե արդյոք այդ տեսակ տնտեսությունը զարգանալ։ Իհարկ վո՛չ։ Քաղաքի հետ քիչ կապ ունեցող, գործարաններից, յերկաթուղուց, գիտությունից և մեքենաներց կտրված զյուղացիությունն, իհարկե, թե հետ կմնա և թե չի զարգանա, շահագրդոված չի լինի յերկրի գործարանային դրության բարելավումով։

Բայց ԽՍՀՄ մեջ կան զյուղական տնտեսություններ, վորոնք աշխատում են իրենց արտերը մեծացնել, բազմացնել ընտանի անասունների թիվը։ Նրանք այդ անում են նրա համար, վորպեսզի շատ հացահատիկ ստանան, վորից իրենց գործածության համար թողնեն միայն այնքան, վորքան հարկավոր ե ընտանիքի կարիքները հոգալու, իսկ մնացածը ծախեն, դրա փոխարեն ստանալով ապրանքներ։ Ի՞նչ ապրանքներ են պետք զյուղացուն.՝ հագուստեղեն, կոշիկ, մեքենաներ, հողի պարարտացման նյութ և շատ ուրիշ ապրանքներ։ Այն ընտանիքները, վոր այդպես են աշխատում և գործում, ավելի լավ վիճակի մեջ են, քան առա-

տերն ու անապատները։ Տեղական ժողովուրդը պարապում է գլխավորապես անասնապահությամբ, պարտիզալանությամբ, նաև մշակում է բամբակ, վորից գործարաններում կտորեղեններ են պատրաստում։ Արհեստականորեն փոռոգվող հողամասերում զբաղվում են այգեգործությամբ, ինչպես և թութունի մշակությամբ։ ԽՍՀՄ մեջ գործածվող բամբակը ստացվում է այստեղից և մասամբ ել Անդրբկովկասից։

ԽՍՀՄ յերկրագործության գլխավոր մասը կազմում է հացահատիկների տնտեսությունը՝ ցորենի, գարու, հաճարի, վարսակի մշակությունը։ Բավական զարգացած է մեզ մոտ նաև անասնապահությունը՝ լծկան և կաթնատու անասունների, խոզի և այլ կենդանիների բուծումը։ Մեզ մոտ շատ թույլ ե գրված արդյունաբերական-տեխնիկական բույսերի մշակության գործը, այն ե՝ կտավատի, թութունի, արևածաղկի, բամբակի, շաքարի ճակնդեղի մշակումը։ Որինակի համար՝ մեր մշակած բամբակի քանակն այնքան քիչ է, վոր չի կարող բավարարել մեր գործարանների կարիքը։ Մենք ստիպված ենք արտասահմանից բերել թանկ գնով բամբակ։

Յերկրագործության զարգացումը, բացի բնության պայմաններից ու կլիմայից, կախված է նաև յերկրի ձանապարհների դրությունից, գործարանների քանակից։

Կան շրջաններ, վորտեղ գյուղից քաղաք գալու համար վոչ ճանապարհ կա, վոչ նույնիսկ խճուղի։ Իսկ գյուղերից քաղաք գնալու համար յերբեմն հարկավոր են որեր, շաբաթներ։ Գյուղացիք այդ տեղերում վոչ գնել, վոչ ծախել կարող են։ Այդ շրջանների գյուղացիությունը փողի յերես չի տեսնում, քաղաքից ապրանք չի ստանում, այլ ամեն ինչ ինքն է պատրաստում իր համար։ Այդպիսի շրջանների գյուղացիներն ասում են. «Իմ ի՞նչ

գործն ե՝ թե շատ կամ քիչ գործարաններ կան։ Միևնույն ե՝ յես նրանցից վոչ մի կախում չունեմ»։

ԽՍՀՄ 22 միլիոն գյուղացիական տնտեսություններից դեռ շատ շատերը պատկանում են այդ տեսակ թույլ տնտեսություններին։ Զե՞ վոր կան զրբյաններ, յակուտներ, սամոյեդներ, վորոնցից շատերը մինչև այսոր լուցկու փոխարեն կայծաքար են գործածում, նավթի տեղ՝ մարիս ու յուղ, ասեղի փոխարեն՝ ձկան վոսկոր, իսկ գաղաններին բըռնում են թակարդներով, վորովհետև նրանք չեն կարող գործածել հրացան, ծանօթ չեն վառողի հետ։

Մի՞թե հայաստանի գյուղացին, վոր մինչև հիմա ապրում է նույն պայմաններում, ինչ պայմաններում աշխատում եր նրա պապը, շա՞տ ե առաջ գնացել մյուս ժողովուրդների գյուղացիներից, վորոնք իրենք են ամեն ինչ պատրաստում սկսած հացից մինչև հագուստեղենը։ Կարո՞ղ ե արդյոք այդ տեսակ տնտեսությունը զարգանալ։ Իհարկե վո՞չ։ Քաղաքի հետ քիչ կապ ունեցող, գործարաններից, յերկաթուղուց, գիտությունից և մեքենաներց կարգած գյուղացիությունն, իհարկե, թե հետ կմնա և թե չի զարգանա, շահագրգուված չի լինի յերկրի գործարանային գրության բարելավումով։

Բայց ԽՍՀՄ մեջ կան գյուղական տնտեսություններ, վորոնք աշխատում են իրենց արտերը մեծացնել, բազմացնել ընտանի անասունների թիվը։ Նրանք այդ անում են նրա համար, վորպեսզի շատ հացահատիկ ստանան, վորից իրենց գործածության համար թողնեն միայն այնքան, վորքան հարկավոր ե ընտանիքի կարիքները հողալու, իսկ մնացածը ծախեն, դրա փոխարեն ստանալով ապրանքներ։ Ի՞նչ ապրանքներ են պետք գյուղացուն. — հագուստեղեն, կոշիկ, մեքենաներ, հողի պարարտացման նյութ և շատ ուրիշ ապրանքներ։ Այն ընտանիքները, վոր այդպես են աշխատում և գործում, ավելի լավ վիճակի մեջ են, քան առա-

Ջինսերը: Տարեց-տարի այդպիսի գյուղացիների գրությունը լավանում է, միջոցները շատանում են: Պետք է ասել, վոր մոտիկ գոնզած քաղաքները, յերկաթուղին, գործարանները շատ նպաստում են գյուղացու գործին: Զարգանում, ուժեղանում են գյուղացիների տնտեսությունները: Մրանք կապված են լինում գործարանների հետ: Մրանք կողմանից են լինում գործարանների շատացման և զարգացման:

Մենք տեսանք, վոր ԽՍՀՄ գյուղական տնտեսությունը բազմատեսակ եւ և զարգացման տեսակետից կանգնած ե տարբեր մակարդակների վրա: Մեզ մոտ կան գյուղական տնտեսություններ, վորոնք իրենց մթերքները ծախում են, ունեն գործիքներ ու մեքենաներ (կենտրոնական նահանգներում, Ուկրայինա, Բելոռուսիա, Հյուսիսային Կովկաս): Կան նաև տնտեսություններ, մանավանդ ծայրագավառների աղջությունների մոտ, վորոնք համարյա վոչինչ չեն ծախում, հազիվ հաղ իրենց են կերակրում, կտրված լինելով յերկրի կյանքից:

ԽՍՀ Միության ամբողջ գյուղատնտեսությունը բարելավելու, հետամնաց գյուղացիությանը խեղճության և աղքատության ճանկերից ազատելու համար հարկավոր են ճանապարհներ, հարկավոր են մեքենաներ, կնշանակի հարկավոր են գործարաններ:

Այժմ տեսնենք, թե ինչ գործարաններ ունինք մեր յերկրում:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Գլխավորապես ի՞նչ ե բանում մեր դաշտերում: Վո՞ր բույսերն են արդյունաբերական-տեխնիկական կոչվում:

Ի՞նչ նշանակություն ունեն գործարանները գյուղատընտեսության համար:

Խ. Ս. Հ. Մ. ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ.

Մի անգամ ևս նայեցեք քարտեզին: Այստեղ զանազան կետերով նշանակված ե, թե վորտեղ մենք ունենք գործարաններ և ինչ են նրանք պատրաստում: Սովորաբար գործարանների մասին ասում են՝ թե նրանք արտադրում են ապրանքներ: Հաճախ գործարանների աշխատանքն անվանում են մեկ խոսքով՝ արդյունաբերություն: Քարտեզի վարի մասում, աջ անկյունում կան մի շարք նշաններ, վոր «պայմանական նշաններ» են կոչվում: Այդ նշանների միջոցով շատ հեշտ կարելի է քարտեզի վրա դտնել այն ամենը, ինչ կամենում եք: (Չեռք բերեք այդպիսի քարտեզ):

Արդյունաբերությունը բաղկացած ե զանազան մասերից, վորոնք իրարից կախումն և կապ ունեն: Արդյունաբերության գլխավոր մասերը հետեւյալներն են.

1) Քարածուխի մշակումը, 2) նավթի մշակումը, 3) յերկաթի արդյունաբերումը, 4) յերկաթի, չուգունի և պողպատի մշակումը, վորոնցից պատրաստում են զանազան մեքենաներ և գործարանների համար անհրաժեշտ մասեր, պատրաստում են յերկաթուղու գծեր, շողեկառքեր, տրակտորներ և յերկարգործական ուրիշ մեքենաներ ու գործիքներ:

Եթե դուք մի քիչ մտածեք, կարող եք գտնել, վոր արդյունաբերությունը բաժանվում է յերկու ճյուղի. առաջին ճյուղին ե պատկանում արդյունաբերության այն մասը, վոր գետնի խորքերից ե ստացվում, ինչպես՝ որինակի համար՝ յերկաթը, քարածուխը, նավթը: Այդ կոչվում ե արդյունահանող արդյունաբերություն: Մյուս ճյուղին պատկանում ե արդյունաբերության այն մասը, վոր յերկրի հարստությունները մշակում ե: Այդ կոչվում ե արդյունահանող արդյունաբերություն:



Բացի քարածուխից, յերկաթից, արդյունաբերությունը մշակում են նաև պղինձ, վոսկի, արծիճ, արծաթ և այլ մետաղներ:

Մշակող արդյունաբերությանը պատկանում են արդյունաբերության այն բաժինները, վորոնք հում նյութից շինում են պատրաստի ապրանքներ: Արդյունաբերությունը մշակում են թե գետնի խորքերից հանած մետաղները և այլն, և թե գյուղատնտեսական մթերքները (բամբակ, շաքարի ճակնդեղ, բուրդ, յուղերի սերմեր և այլն): Մշակող արդյունաբերությունը, բացի մեքենաներից, պատրաստում են նաև այնպիսի ապրանքներ, վոր ժողովրդի ամենորյա պետքերն են բազարարում: Պատրաստում են մեխ, ասեղ, մանուֆակտորա, շաքար, սապոն, ապակի, կաշվեղեն և այլն:

Գյուղատնտեսության մեջ շատ քիչ են գործածվում քարածուխ և նավթի: Ով քաղաքում չի յեղել, չի կարող իրեն պատկերացնել, թե ինչ հսկայական նշանակություն ունենյուրաքանչյուրյերկրի համար քարածուխն ունավթը:

Գործարանների համար վառելիքը գործ են ածվում այնպես, ինչպես հացը մարդու համար: ԽՍՀՄ գործարանները, ելեքտրակայանների մեծ մասը, շոգեկառքերը, նավերը գործ են ածում կամ քարածուխ կամ նավթ: Ամեն տարի մեր ածխահանքերից ստանում ենք $1\frac{1}{2}$ միլիոն փութ ածուխ: Ածուխի մեծ մասը ստանում ենք Դոնի ավազանից, վոր Արտեմովսկ քաղաքի շրջանումն են գտնվում:

Քարածխի հանքեր ուրիշ տեղեր են կան, բայց այդ տեղերի քարածուխը դեռ այն չափերով չի գործածվում, ինչպես Դոնքասինը: Ուրիշ շրջաններից, վորոնք քարածուխ են տալիս մեր արդյունաբերությանը, հայտնի յեն Ռուսի շրջանը, Մոսկվայի շրջանը, Կուզնեցկ և Միքիր: Ածուխ կա նաև մեղ մոտ՝ Անդրկովկասում, բայց բավական չափով դեռ չի մշակված: Գետնի տակ գտնվող ածխի քանակն այնքան մեծ է, վոր մեր ստացած ածուխը

մի չնչին մասն են կազմում այդ հարստության: Մեծ քանակությամբ դեռևս չոգտագործված ածուխ կա Ղազախըստանում և Սիբիրում:

Նավթի գլխավոր շրջանը Աղրբեջանն են համարվում, գլխավորապես Բաքուն և նրա շրջակայքը: Յերկրորդ տեղը բունում են՝ Գրոզնին, վոր մի քիչ հյուսիս և գտնվում Բագվից: Ամեն տարի մենք մեր նավթահորերից ստանում ենք մոտ $1\frac{1}{2}$ միլիոն փութ նավթ: Գետնի տակ գտնված նավթի քանակն ել անչափ է: Մեծ պահեստներ կան Ղազախստանի դաշտերում:

Յերկաթը ստացվում են գլխավորապես Ռուսական և Ուկրայինայում: Յերկաթից պատրաստում են պողպատ: Ինչպես վառելիքի (ածուխ, նավթ), նույնպես յերկաթի քանակը, վոր ամեն տարի ստանում ենք մեր յերկրում, շատ և շատ չնչին մասն են կազմում այն հարստության, վոր գտնվում են յերկրի խորքերում: Հանքանյութերի պահատներ կան հետեւյալ շրջաններում՝ Անդրկովկասում, Միքիրում, Հեռավոր Արևելքում, Կուրսկի նահանգում:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ և նշանակում արդյունաբերություն խոսքը:

Վո՞ր արդյունաբերությունն են կոչվում արդյունահանող: Վո՞ր արդյունաբերությունն են կոչվում արդյունագործող: Ինչի՞ համար են պետք քարածուխը: Ինչի՞ համար են նավթը:

Վո՞րտեղ են գտնվում մեր յերկաթի գլխավոր հանքերը Վո՞րտեղ են գտնվում քարածխի գլխավոր հանքերը:

ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ԿԱՊՎԱԾ ԼԻՆԻ ԹԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ.

Ամեն մի լավ կազմակերպված տնտեսություն պահանջում են, վորպեսզի նրա մասերն իրար հետ կապված լինեն և մի մասը մյուսին հարմարեցրած: Այդպիսի դրու-

թյան մեջ պիտի գտնվեն նաև ամբողջ յերկրի տնտեսության մասերը:

Պարզ ե, զոր սև նավթը մաքրելու, մաքուր նավթ ստանալու գործողությունը պիտի կատարվի այստեղ, վորտեղ ստացվում ե նավթը, այսինքն՝ նավթահորերի շրջանում։ Չուգուն, պողպատ պատրաստող գործարանները պիտի գտնվեն այստեղ, վորտեղ գլխավորապես գտնվում են յերկաթի և քարածխի հանքերը։ Յեկ ընդհանրապես մշակող արդյունաբերությունը պիտի գտնվի այն շրջաններում, ուր կան այդ ճյուղի արդյունաբերությանն անհրաժեշտ նյութերն ու վառելիքը։ Մոտավորապես հենց այդպես ել ե։ Հարավային շրջաններում, վորտեղ գտնվում են ածխահանքերը, գործում են պողպատի, յերկաթի, չուգունի գործարանները։ Ուրալում են գտընվում մեր մետաղագործարանները։ Մեր մեծ ելեքտրակայարանները շինվում են այստեղ, վորտեղ մեծ քանակությամբ տորֆ կա։ Բայց առաջ՝ հին կառավարության ժամանակ՝ գործարանները շինվում եյին առանց նախորոք մշակած ծրագրի։ Խոշոր մեքենա շինող գործարանները գտնվում են հյուսիս-արևմտյան կամ կենտրոնական արդյունաբերական շրջաններում (Լենինգրադ, Մոսկվա, Բրյանսկ, Նիժնիյ)։ Մանուֆակտուրա պատրաստող գործարանները հին կառավարության ժամանակ շինվել են նույնպես կենտրոնական արդյունաբերական շրջանում (Մոսկվայում, Տվերում, Իվանովո-Վոլգոնեսսկում)։ Իսկ մենք գիտենք, զոր բամբակը Մոսկվայում, Տվերում չի բնում, այլ՝ միջին Ասիայում և Անդրկովկասում։

Այժմ, Խորհրդային իշխանության որով, մեր նոր շինվող և շինվելիք գործարանները այլ կերպ կղասավորվեն։ Մեզ հաղկավոր ե, վորպեսզի մեր գործարանները գտնըվեն հում նյութի^{*)} և վառելիքի մոտ։ Բամբակը բնում

*) Հում նյութ ե կոչվում այն ամենը, ինչ գործարանների

և միջին Ասիայում (Ուզբեկստան, Թուրքմենստան), Անդրկովկասում (Հայաստան, Աղբբեջան), իսկ այնտեղ չկան գործարաններ, վոր կարողանան բամբակ մաքրել, բամբակից կտորեղեն գործել։ Մենք ել սկսում ենք հենց այդ շրջաններում և հանրապետություններում շինել նոր գործարաններ։ Յերկրագործական մեքենա շինող գործարանները մենք պիտի կառուցենք այն շրջաններում, վորտեղ գյուղացիությունը կազմում ե ազգաբնակության գլխավոր մասը (Սիբիրում, Ուրալում, Հարավ-Արևելքում):

Առանձին նշանակություն ունի մեզ համար խոշոր մեքենա պատրաստող գործարաններ կառուցելու գործը։ Մեր յերկը խոշոր մեքենա պատրաստող գործարանների մեջ առանձին տեղ են բռնում հետեւյալ հսկա-գործարանները։ Լենինգրադում՝ Պուտիլովի, Որուխովի, Մոսկվայի մոտ՝ Կոլոմնայի, Նիժնու մոտ՝ Սորմովի, Բրյանսկու գործարանները։

Պուտիլովի գործարանը 1926 թվին տոնեց իր գոյության 125 ամյակը։

Այդ գործարանը իր մեծությամբ հավասար ե մի ամբողջ քաղաքի։ 140 գեսետին տարածություն ե բռնում։ Հում նյութը տեղափոխելու, գործարանի մի մասից մյուսն աղբանքներ, վառելիք փոխադրելու համար գործարանում շինված ե յերկաթուղի, վորի վրա 30 շոգեկառք ե աշխատում։ Այժմ այդ գործարանում 10 հազար բանվոր ե աշխատում։ Պուտիլովի գործարանը պատրաստում ե գլխավորապես՝ շոգեկառք, վագոն, արդյունաբերության համար մեքենաներ։ Առաջ՝ հին կառավարության ժամանակ՝ այդ գործարանում պատրաստում եյին մեծ քանակությամբ թընդանություն, պատերազմական զանազան գործիքներ։ Այժմ՝ թնդանութներ պատրաստող գործարանը հարմարեցրած ե մշակվում ե։ Որինակի համար՝ բամբակ, Գործարաններում բամբակից թել են պատրաստում, հետո կտորեղեն գործում։ Գործարաններում կաշվից պատրաստում են կոշիկ և այլն։

տրակտորներ պատրաստելու։ «Կարմիր Պուտիլովեց» գործարանը ամեն ամիս 50—60 տրակտոր է բաց թողնում։

1926 թվի ամառվանից, Ստալինգրադ քաղաքում սկսել ենք շինել մի հսկայական գործարան, վոր յերկրագործական մեքենաներ պիտի բաց թողնի։

Մենք տեսանք, վոր մեր նոր գործարանները պիտի աշխատեն այն շրջաններում, ուր գտնվում է հում նյութը— վառելիքը։ Այդպիսի շրջանների թիվը շատ քիչ է։ Այդ կողանակի, վոր պատրաստի ապրանքները, վոր մեր գործարանները պիտի բաց թողնեն, մենք պիտի տեղափոխենք ԽՍՀՄ զանազան մասերը։ Իսկ դրա համար մեզ հարկավոր են՝ յերկաթուղի, նավագնացություն։ Առանց յերկաթուղու և նավերի մենք չենք կարող մեր յերկրի անթիվ հարստություններից ոգտվել։ Յերկաթուղով մենք տեղափոխում ենք պատրաստի ապրանքներ ԽՍՀՄ հեռավոր ծայրերը, հարավային շրջաններից հացահատիկները տանում ենք դեպի հյուսիս, վորտեղ ժողովուրդը պարապում է անտառաբուծությամբ և վորսորդությամբ։ Յերկաթուղին ոգնում է գյուղացուն իր մթերքները ծախելու և նրանց փոխարեն գնելու իրեն անհրաժեշտ ապրանքներ, վոր գործարաններումն են պատրաստում։ Բայց մեր յերկաթուղին չի բավարարում մեր բոլոր պետքերը։ Ամեն 100 քառակուսի վերստին մեզ մոտ ընկնում է $1\frac{1}{2}$ վերստ յերկարության յերկաթուղի։ Իսկ ֆրանսիայում 100 քառակուսի վերստին ընկնում է 9 վերստ յերկաթուղի, Անգլիայում՝ 12 վերստ, Գերմանիայում՝ $11\frac{1}{2}$ վերստ։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Վո՞ր շրջաններում ձեռնառ յե կառուցել գործարաններ։

Ի՞նչո՞ւ Խորհրդային իշխանությունը Թուրքեստանումն է հիմնում մանուքակտուրային գործարան։

Ի՞նչ խոշոր - մեքենա պատրաստող գործարաններ կան ԽՍՀՄ մեջ։

Ի՞նչո՞ւ յե մեզ պետք յերկաթուղին։

Ի՞նչ եր ԱՍՈՒՄ ՀՆԿ. ԼԵՆԻՆԸ ՄԵՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԹԵՎ Ի՞նչ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՐ ԱՌԱՋԱԿՈՒՄ ՄԵՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎԱՑՆԵԼՈՒ.

Թագավորների ժամանակ, ոռուսներն ասում եյին. «Մեր յերկիրը մեծ ե, հարուստ, ընդարձակ, բայց նրանում կարգ ու կանոն չկա»։

Այժմ բանվոր դասակարգը գյուղացիության ոգնությամբ իր ձեռքն է առել իշխանությունը, նա մեր ընդարձակ ու հարուստ յերկրում ստեղծեց մի այնպիսի իշխանություն, վոր մինչև այսոր ուրիշ յերկրներում դեռ չկա։ ԽՍՀՄ միակ յերկիրն է, վորտեղ բանվոր դասակարգը գյուղացիության հետ միասին ձեռնարկեցին յերկրի տընտեսությունը փոխել այն ձևով, վոր քաղցած, աղքատ չինեն, վորպեսզի հողը, գործարանները կարողանան կերակրել, հագուստ մատակարարել բոլորին։ Ճիշտ ե, այդ շատ դժվար է, քանի վոր մեր յերկրում դեռ կան անթիվ, անհամար մանր գյուղական տնտեսություններ, քանի դեռ մենք չունենք բավականաչափ գործարաններ, բայց այդ դեռ չի նշանակի, վոր անկարելի յե։ Ընդհակառակը, այդ կողանակի, վոր մենք պիտի գործ դսենք ամեն միջոց, չխնայենք աշխատանք։

Մեր յերկրի տնտեսության մասին ընկ. Լենին ասում եր. «Նայեցեք ԽՍՀՄ քարտեզին. Վոլոգդայից դեպի հյուսիս, Ռուսական վրա, և Սարատովից դեպի հարավարևելք, Ուսկից և Որենքուրգից դեպի հարավ, Տոմսկից դեպի հյուսիս. այնտեղ գտնվում է անծայր տարածություն, վորտեղ կարող եյին տեղափորվել տասնյակ մեծագույն, կուլտուրական, զարգացած պետություններ։ Յեվայդ տարածության վրա իշխում է նահապետականությունը, կիսավայրենի և նույնիսկ իսկական վայրենի կյանքը։ Իսկ Ռուսաստանի մնացած մասերում, գյուղական խուլ ան-

Կյուններում ամեն տեղ, վորտեղ տասնյակ վերստեր ձըգ-վում են շավիդներ, ավելի ճիշտ կլինի ասել՝ գյուղը տաս-նյակ վերստերով բաժանված ե յերկաթուղուց, ճանապարհ չունի դեպի յերկաթուղին, այսինքն նյութական կապ*) չունի կուլտուրայի հետ, ծանր արդյունաբերության հետ, մեծ քաղաքների հետ։ Միթե այդ տեղերում ամեն տեղ նահապետականությունը, արդումովշչինան**), կիսավայրենությունը չի իշխում։

Մեր կիսավայրենությունն ու վայրենությունը, վորի մասին ընկ. Լենինն ե ասում, կայանում ե նրանում, վոր մենք մինչև հիմա յերկրագործության մեջ մեր պապերից շատ հեռու չենք գնացել։ Մեր գյուղերում յերկրագործությամբ պարապելիս, գործ են ածում՝ գութան, արոր։ Մեր ժողովրդի մեծ մասը դեռ անգրագետ ե։ 22 միլիոն գյուղական տնտեսություն կա մեր յերկրում։ Դրանք վերին աստիճանի քիչ հացահատիկ են ստանում։ Այսպիսի զրության մեջ ենք գտնվում։ Ի՞նչ պիտի անենք, վորպեսզի դուրս գանք այս դրությունից։

Մեր յերկրի բոլոր գործարանները, մենքենաները, յերկաթուղին, այն ամենը, ինչ վոր կա մեր յերկրում, պատրաստվել ե աշխատավոր մարդու ձեռքով, շինվել, կառուցվել ե գյուղացիների և բանվորների ձեռքով։

Միայն այդ աշխատավոր ձեռքերի կառավարությունը, Խորհրդային իշխանությունը կարող ե ապահովել յերկրի տնտեսության դարգությունը։

*) Նյուրական կապ կուլտուրայի հետ—կնշանակի այն, վոր գյուղացին կարող ե յերկաթուղով գնալ քաղաք, ուրիշ տեղեր, ծանրանալ այստեղի կյանքի հետ, սովորել նոր բաներ։

**) Աբովմովչինա խոսքը Արլումով ազգանունից ե։ Հայտնի ուռող Գոնչարովն իր յերկերից մեկում դուրս ե բերել կալվածատերի մի տիպ, վոր ծույլ ե, անշարժ։

«Մեր պարտականությունն ե,—ասում եր Լենինը,— գործն այնպես տանել, վորպեսզի յերկրագործական, գյուղատնտեսական ամենահետամնաց արտադրությունը նոր հիմքերի վրա դրվի, վորպեսզի դա կերպարանափոխենք և հին ձեզով, անգիտակցորեն տարվող յերկրագործական արհետաց դարձնենք այնպիսի արհետ, վորը հիմնված լինի գիտության և տեխնիկայի նվաճումների վրա։

Լենինի ցույց տված խնդիրը մենք կարող ենք լուծել միայն այն ժամանակ, յերբ կարողանանք մեր արդյունաբերությունը դնել նոր հիմքերի վրա։ Մեր նըպատակն ե տարեց-տարի քարածուխի, նավթի քանակը շատացնել, ուժեղացնել մետաղագործությունը, մանավանդ մեքենա շինող գործարանների թիվը։ Այդ բոլորի համար հարկավոր են, վորպեսզի մենք կառուցենք նորանոր այնպիսի գործարաններ, վորոնք համապատասխանեն գիտության և տեխնիկայի վերջին խոսքին։ Կանցնի 10—15 տարի և մեր յերկերը բոլորովին կկերպարանափոխվի։ Բանվորի մուրճի հարվածների տակ, նոր և ուժեղ մեքենաների գործողությամբ, յերկերը կրանա մեր առաջ իր ծոցերը, վորպեսզի մենք կարողանանք ոգտվել նրա հարստություններից։ Քարածուխ, նավթ, յերկաթ և այլ մետաղներ մենք կատանանք մեքենաների միջոցով, վոր գիտության և տեխնիկայի շնորհիվ որ-որի վրա կատարելագործվում են։ Մենք մեր յերկրի տնտեսությունը գիտական հիմքերի վրա կդնենք։ Արդյունաբերությունն ու յերկրագործությունը միասին, նոր, գիտական միջոցներով մեզ կհասցնեն սոցիալիզմին։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչի՞ յեն ձըգտում հասնել ԽՍՀՄ բանվորներն ու գյուղացիները։

Ինչո՞ւ դժվար ե մեզ մոտ վերացնել աղքատությունը։

Ի՞նչ ե կտակել լենինը մեր կյանքը նոր հիմքերի վրա
դնելու համար:

Զրույց յերկրորդ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

1. Կրկնեցեք համառոտ, ինչի մասին կարդացեք:
2. Քարտեղի վրա գտեք այն տեղերը, զորտեղ գլխա-
վորապես հացահատիկ են ցանում:
3. Գտեք քարտեղի վրա այն շրջանները, զորտեղ ար-
դյունաբերություն կա:
4. Ցույց տվեք քարտեղի վրա մոտավորապես այն
տեղը, զորտեղ ձեր գյուղն ե գտնվում:
5. Հաշվեցե՛ք, քանի՞ վերստի վրա յե գտնվում յերկա-
թուղու գծից ձեր գյուղը, և այդ հանգամանքն ի՞նչ ազդե-
ցություն ունի գյուղացու տնտեսության վրա:
6. Այն բառերը, զոր ձեզ անծանոթ են, գրեցեք
տեարակի մեջ և փնտռեցեք նրանց բացատրությունը բա-
ռարանում:

ՈՎԿ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.

ՈՒԽՄՆ ԵՐ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ՀԵՂԱՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆԸ.

ՄԵծ և ընդարձակ ե մեր Խորհրդային յերկիրը: Յեր-
կրի հարստությունները, ինչպես և աշխատավոր ժողովրդի
ձեռքով ստեղծված հարստությունները առաջ պատկանում
եյին կապիտալիստներին, կալվածատերերին, մի խոսքով՝
վո՛չ-աշխատավորությանը:

Հողի մեծ մասը պատկանում եր խոշոր կալվածատե-
րերին (պոմեշչիկներին):

Որինակի համար՝ յուրաքանչյուր 100 դեսետին հո-
ղից 35-ը պատկանում եր գյուղացոց, իսկ 65-ը թագա-
վորի, թագավորական գանձարանի, կալվածատերերի,
յեկեղեցիների ու վանքերի սեփականությունն եր: Այսպես
եր բաժանված հողը Ռուսաստանում մինչև Հոկտեմբերյան
հեղափոխությունը: Իսկ մեզ հայտնի յե, զոր իշխանների,
կալվածատերերի թիվը աշխատավոր գյուղացիության թվի
մի հազարերորդ մասն եր կազմում, իսկ հող նրանք յերկու
անգամ ավելի շատ ունեին:

Մոտավորապես յոթանասուն տարի սրանից առաջ, Ռուսաստանում գյուղացիության դրությունն ավելի վատ եր: Այն ժամանակ դեռ գյուղացիուն ուներ ճորտական իրավունքը: Գյուղացին վոչ միայն հողի տերը չեր, այլ և նա ինքը պատկանում եր պոմեշչիկին: Պոմեշչիկը ազատ իրավունք ուներ իրեն պատկանող գյուղացուն ծախել մի ուրիշ՝ իր նման կալվածատիրոջ:

Յերբ 1861 թվին ճորտական իրավունքը վերացվեց, կալվածատերերի դրությունն ավելի լավացավ, իսկ գյուղացիներինը՝ վատացավ: Կալվածատերերը հողի ամենալավ մասերն իրենք վերցրին, իսկ վատը տվին գյուղացոց: Այն հողաբաժինների փոխարեն, վոր գյուղացիները ստացան, աշխատավոր գյուղացիությունը կալվածատերերին պիտի վճարեր խոշոր հատուցում. ազատության փոխարեն գյուղացիք նորից ընկան կալվածատերերի ճանկը: Բացի այդ ամենից, պոմեշչիկները ամեն կերպ արգելվ եյին հանդիսանում գյուղացոց: Որինակի համար՝ գյուղացու տավարը չեր կարող դուրս գալ դաշտ, վորովհետև կալվածատերերը հողը այնպես եյին բաժանել, վոր գյուղացիք չկարողանան իրենց տավարը դաշտ քշել: Վորպեսզի գյուղացու կովը, վոչսարը դաշտ դուրս գնան, նրանք պիտի անցնեյին կալվածատերերի ցանքսերով: Վայ թե տավարը վսաս հասցըեց արտին: Այն ժամանակ կալվածատերը կպահանջեր տուգանք, կարող եր պատժել և այլն: Մի ուրիշ որինակ. գյուղացուն հատկացրած հողը գլխավորապես կալվածատերերին պատկանած հողերի մեջ եր լինում: Գյուղացին իր դաշտը գնալու, մշակելու համար պիտի վճար տար կալվածատերին, վորպեսզի վերջինս գյուղացուն ազատ թույլ տար իր դաշտերով անցնելու:

Թեև ճորտական իրավունքը վերացվեց Ռուսաստանում, բայց գյուղացին փաստորեն մնաց նույն գրության մեջ մինչև չոկտեմբերյան հեղափոխությունը:

Քաղաքներում՝ գործարանները, յերկաթուղին, հանքերը պատկանում եյին կապիտալիստներին: Յերկար տարիների ընթացքում հազարավոր և միլիոնավոր բանվորներ սերնդից-սերունդ իրենց ձեռքերով կառուցեցին քաղաքի արդյունաբերությունը: Նրանք շինեցին գործարանների շենքերն ու գործիքները, գետնի խորքերից հանեցին ու մշակեցին՝ ածուխ, յերկաթ և այլ մետաղներ ու նավթ: Մեքենաների ոգնությամբ բանվորները տարեցտարի կապիտալիստների համար ստեղծեցին անչափ հարստություն:

Հողի տերը կալվածատերերն եյին, իսկ քաղաքի գործարանները պատկանում եյին կապիտալիստներին: Աշխատավոր ժողովուրդը միայն մի զույգ ձեռք ուներ: Ում պատկանում եր հացն ու գործարանը, յերկրի հարստությունները, — նա յել իշխում եր յերկրում, նրան ել պատկանում եր իշխանությունը:

Ռուսաստանում ամենահարուստ կալվածատերն ու կապիտալիստը թագավորն եր: Պետության զանազան մասերի ամենալավ հողերը նրան եյին պատկանում: Բացի դրանից, թագավորը՝ վորպես պետության գլուխ, ոգտըշում եր պետությանը պատկանող հողերի հասույթից: Իր փողերով նա նոր գործարաններ եր բաց անում: Ռուսաստանում անհարմար եր այդ անել, ուստի ոտար յերկրների հայտնի ու մեծ գործարանների տերերին եր նա ընկերակցում: Որինակի համար՝ ոուսաց նիկոլայ II թագավորը հայտնի գերմանական կրուպի թնդանոթի գործարանի տերերից մեկն եր: Նա իր փողերը պահում եր գլխավորպես անդլիական բանկերում:

Ում շահերը կարող եր պաշտպանել թագավորը, — աշխատավոր գյուղացոց ու բանվորների, թե՞ իր նման կալվածատերերի ու կապիտալիստների: Պարզ ե, վոր վերջինների շահերը: Շատ ժամանակ չի անցել այն որերից, յերբ

շատերը կարծում եյին, թե թագավորը ժողովրդի՝ աստծու կողմից ընտրված պաշտպանն եւ:

Առաջ բանվորներից շատերը նույն կարծիքին եյին: Նրանք չգիտեյին, վոր թագավորը ամենամեծ կալվածատերն ու կապիտալիստն եւ: Մի վերին աստիճանի նշանակալից դեպք բանվորների աչքը բացեց: Այդ 1905 թվի հունվարի 9-ի դեպքն եր: Լենինգրադի բանվորները վորոշեցին գնալ թագավորի մոտ և խնդրել նրանից, վորպեսզի նա իրենց դժվար գրությանը վորսե կերպ ոգնի: Բանվորներն իրենց հետ վերցրին թագավորի պատկերը, խաչ, խաչվառ: Հենց վոր նրանք մոտեցան թագավորական պալատին, թագավորի հրամանով զինվորները գնդակահարեցին անզեն բանվորներին:

Հիմա յել այն յերկրներում, վորտեղ կապիտալն ե իշխում, գործարանատերերը, դատավորները, տերտերները, պետական ծառայողները՝ հիմնարկություններում, դատարաններում, յեկեղեցիներում, դպրոցներում, թերթերում տարածում են և աշխատում համոզել աշխատավորության, թե թագավորը և նրան սպասավորողները ժողովրդի համար են աշխատում:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ո՞ւմ եր պատկանում հողի մեծ մասը՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ:

Ճորտական իրավունքի վերացումից հետո, գյուղացիությունը ի՞նչ տեսակի հող և ի՞նչ պայմանով ստացավ:

Ո՞ւմ շահերն եր թագավորը պաշտպանում:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՈ՞Ի ՀԱՄԱՐ Ե ՊԵՏՔ ԲՈՒՐԺՈՒՅԹԻՍ. ՅԵՎ. ԻՆՉՈ՞Ի ՀԱՄԱՐ Ե ՊԵՏՔ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ.

Բուրժուական յուրաքանչյուր յերկրում ազգաբնակությունը բաժանվում է դասակարգերի, վորոնց շահերը իրար հակասում են: Այդ կնշանակե, վոր յեթե բուրժուազիյն ոգտակար ե բանվորական որը յերկարացնել, դա

ֆշասակար ե բանվոր դասակարգին: Յեթե բանվորների համար շահավետ ե աշխատավարձի բարձրացումը, այդ ձեռնուու չե բուրժուազիային: Յեթե կալվածատիրոջ տեսակետից ոգտակար ե հողի գինը բարձրացնել, դրանով խեղճ ու անհող գյուղացին միանդամայն մատնվում ե սովոր ու մահվան:

Յերբեք չի կարելի հաշտեցնել կապիտալիստներին բանվորների հետ, կալվածատերերին՝ գյուղացոց հետ: Կարող ե լինել կապիտալիստական իրավակարգ, յերբ բուրժուազիան կանգնած ե լինում իշխանության գլուխը, հետեապես և աշխատավոր ժողովրդին ստիպում ե զանազան միջոցներով հպատակվել բուրժուական կարգերին: Կարող ե լինել բանվորական իշխանություն, յերբ բանվոր դասակարգը գյուղացիությամբ, իր ձեռքն ե առնում իշխանությունը, դուրս ե քառում բուրժուազիային, խլումնրա ձեռքից գործարանները և ամբողջ արդյունաբերությունը, հողը դարձնում պետական սեփականություն: Այդ դեպքում բանվորա-գյուղացիական կառավարությունը իրեն նպատակ ե դնում հաստատել այնպիսի կարգեր, վորպեսզի մեկի աշխատանքը մյուսը չշահագործի:

Բուրժուազիան իր կառավարությունը և իշխանությունը պահպանելու և ամրացնելու համար պահում ե բանակ և վոստիկանություն, գրում ե այնպիսի որենքներ, վորոնք պաշտպանում են կապիտալիստների և կալվածատերերի շահերը, հիմնում ե այնպիսի դատարաններ, վորտեղ շատ խիստ կերպով դատում են նրանց, ովքեր կամենում են բուրժուական կարգերը վոչնչացնել:

Որինակի համար՝ կարելի յե ցույց տալ անհամար դեպքեր, յերբ դատարաններում հողի, դաշտի, մարգագետնի համար դատվել յեն գյուղացիք և կալվածատերերը: Դատարանը ամեն անգամ հարցը վորոշել ե

կալվածատերերի ոգտին՝ ինչքան ել գյուղացիք արդարացի լինելին, ինչքան ել գյուղացիք իրավունք ունենային այս կամ այն հողի, դաշտի նկատմամբ։ Վերջապես ի՞նչ բան ե իրավունքի խնդիրը բուրժուական յերկրում։ Իրավունք ունի նա՛, ում պատկանում ե հողն ու գործարանը։ Քանի վոր գյուղացիք և բանվորները զուրկ են դրանից, կնշանակի՝ նրանք զուրկ են նաև իրավունքից։

Քանի բանվոր դասակարգը կազմակերպվում ե, հավաքում իր ուժերը, պատրաստվում պայքար մղելու կապիտալի դեմ, այնքան բուրժուազիան ամեն միջոց գործ ե գնում աշխատավորության բողոքը, անբավականությունը, ապրատամբությունները դադարեցնելու համար։ Բուրժուազիան խարերայությամբ, կաշառքով, յեկեղեցու միջոցով կարողանում ե պահպանել իր իշխանությունը։ Բայց յերբ բանվոր դասակարգը դուրս ե գալիս պայքարի, այն ժամանակ բուրժուազիան այլևս վոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում։ Բերենք մի քանի որինակ։ Անգլիայում բուրժուազիան տարիներ առաջ ստիպված եր բանվորների ուժեղ ճնշման շնորհիվ թույլ տալ գործադուների ազատ իրավունք։ Այդ այն ժամանակն եր, յերբ Անգլիայի բուրժուազիան հավատացած եր, վոր բանվորները միշտ ել իրեն՝ բուրժուազիայի ազդեցության տակ կմնան։

1926 թվի մայիս ամսին Անգլիայում՝ հանքերում աշխատող բանվորները գործադուլ հայտարարեցին։ Անգլիայի բանվորները (հինգ միլիոնից ավելի) ի նշան պրոլետարկան համերաշխության, 7 որ շարունակ հայտարարեցին Անգլիայում աշխատող բոլոր բանվորների ընդհանուր գործադուլ։ Իսկույն կանգ առավ Անգլիայի կյանքը, գործարանները չեյին աշխատում, գնացքները, նավերը, տրամվայը կանգ առան, մի խոսքով՝ կյանքը Անգլիայում մեռափ։ Ահա այդ որերին Անգլիայի բարձրագույն դատարանը հայտարարեց, վոր գործադուլը ապօրինի յե։ Իս-

կույն բանակը, նավատորմիղը և վոստիկանությունը ուազմական դրություն ստացան, սպասելով հրամանի։

Հնդկաստանում, յերբ գյուղացիք ուշացնում են կամ չեն վճարում հարկերը, անգլիացիք այերոպականներից ողմբակոծում են հնդիկ գյուղացոց։

Միենույն դրությունը գոյություն ուներ Ռուսաստանում մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Հիշենք միայն մի գեպք։ Փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ հին կառավարությունը տապալվեց, բուրժուազիայի ազենտ Կերենսկին գործ դրեց խարեբայության ամեն մի միջոց։ Նա հայտարարում եր, թե հողն ու ազատությունը պատկանում է ժողովրդին։ Գյուղացիք իրենց մոտ հողային կոմիտեներ հիմնեցին, վորոնցից շատերը վորոշեցին կալվածատերերին պատկանած հողերը գրավել։ Հենց վոր Կերենսկու կառավարությունը այդ լսեց, իսկույն զինված բանակներ ուղարկեց գյուղացոց դեմ, նոր անմեղ մարդկանցով լցնելով բանտերը։

Այս ամենից յերեսում ե, վոր բուրժուազիան յուրաքանչյուր յերկրում իշխում ե անսանձ դիկտատուրա։ (այսինքն այնպիսի իշխանություն, վորի իրավունքները սահմանափակված չեն)։ Յեզ այդ իշխանությունը պատկանում ե կալվածատերերին։ Այդ դիկտատուրան ամեն տեսակ միջոցներով՝ բանակի, վոստիկանության, որենքների, դատարանի, զպրոցների, յեկեղեցու միջոցով՝ ճնշում, շահագործում ե բանվորներին և գյուղացոց։ Բուրժուազիան պարզ կերպով չի ասում, թե իր իշխանությունը դիկտատուրա յե։ Նա ամեն կերպ աշխատում ե կեղծ խոսքերով ծածկել այդ։ Բուրժուազիան հայտարարում ե, իբր թե նրա իշխանությունը ժողովրդի կամքովն ե ստեղծված, վոր նրա կառավարությունն իբր թե ժողովրդական կառավարություն ե։

Մեր յերկրում կապիտալիստների ու կալվածատերերի դիկտատուրան խորտակվեց հեղափոխական բանվորների և գյուղացոց ձեռքով։ Հողը, գործարանները, յերկրի բոլոր հարստությունները անցան աշխատավոր ժողովրդի ձեռքը։ Ամենից առաջ բանվորներն ու գյուղացիք, վորիշանության գլուխն անցան, վոչնչացրին հին (թագավորի ժամանակա) որենքները, քշեցին ցարական պաշտոնյաներին, դատավորներին, արձակեցին հին բանակը։ Հին բուրժուական կառավարության փոխարեն աշխարհում առաջին անգամ կազմվեց Խորհրդային պետություն։ Ինչո՞վ ետարերգում մեր Խորհրդային իշխանությունը կապիտալիստական պետություններից։

Նախ և առաջ՝ մեր Խորհրդային պետությունը տարբերվում է մյուս յերկրների իշխանությունից նրանով, վոր մեր յերկրում հաստատվել ետարակարգի դիկտատուրան, վոր բազմամիլիոն չքավոր ու միջակ գյուղացիության հետ միասին ընթանում է սոցիալիզմի ուղիղով։

Կապիտալիստների և կալվածատերերի ձեռքից Խըլված են գործարանները, հողը. բացի դրանից, այդ դասակարգերը, վորոնց առաջ պատկանում եյին հողը, արդյունաբերությունը, այժմ հեռացված են պետության գործերից։ Խորհրդային որենքների հիման վրա նրանք չեն կարող մասնակցել պետական գործերում։ Խորհրդային իշխանության գլուխ կանգնել ետարական աշխատավոր ժողովուրդը, վոր վերին աստիճանի ուշադրությամբ հետևում է իր գասակարգային թշնամիներին, վորպեսզի սրանց ամեն մի թշնամական գործին անխնայուն վերջ տա։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ դասակարգեր գոյություն ունեն բուրժուական յերկրներում։

Ինչո՞ւ չի կարելի հաշտեցնել բանվորների շահերը կապիտալիստների շահերի հետ, գյուղացոց շահերը՝ կալվածատերերի շահերի հետ։

Ի՞նչ միջոցներով ետարժուազիան ամրապնդում իր իշխանությունը։ Ինչո՞ւ համար պետք ետարակարգի դիկտատուրան։

Ի՞նչո՞ւ կազմված իշխանությունը։

Այժմ տեսնենք, թե ինչպես ետարակած Խորհրդային իշխանությունը։ Սկսենք գյուղացրնուրդներից։

Գյուղական խորհուրդներն ընտրվում են գյուղի չքավորների ու միջակ գյուղացիների կողմից։ Յերբ գյուղի չքավոր ու միջակ գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ են աշխատում, խորհուրդները աշխատում են նրանց ոգտին։ Բայց գյուղի կուլակն ու հարուստները դեռ մինչև հիմա պայքար են մղում, վորպեսզի իրենց ձեռքը ձգեն գյուղացրնուրդները։ Հենց վոր գյուղացրնուրդը նրանց ձեռքն ընկնի կամ հենց վոր նրանք այնտեղ կարողանան նստեցնել իրենց մարդկանց, կուլակները կկարողանան իրենց աղղեցությունն ունենալ գյուղացրնուրդներում։

Գավառամասային գործկոմներն ընտրվում են գյուղի խորհուրդների համագումարներին, վոր համարվություն ետարիս չքավոր և միջակ գյուղացոց՝ իրենց ներկայացուցիչներին ընտրելու և թույլ չտալու կուլակներին անցնել գործկոմները։

Խորհրդային Միության մեջ գոյություն ունեն հազարավոր այդպիսի շրջանային գործկոմներ և տասնյակ հազար գյուղացրնուրդներ։ Ո՞վքեր են աշխատում այդ որդաններում։ Ի՞նչ մարդիկ են այնտեղ նստած։ Թվերն ասում են հետեւյալը։ Գյուղացրնուրդների անդամների յուրաքանչյուր 100 հոգուց 95-ը չքավոր և միջակ գյուղացիներ են։ Այդպես են կազմված մեր գյուղացրնուրդները։

Քաղաքի խորհուրդներն ընտրվում են բանվորների և ծառայողների կողմից։ Ընտրողների գլխավոր մասը բանվորներ են։

Մեր գավառներն ու շրջանները կառավարում են գավառային և գավառամասային խորհուրդների համագումարները։ Իսկ նրանց խորհուրդների համագումարից մինչև մյուս համագումարն աշխատելու համար ընտրվում են գործկոմներ, վորոնք նույն իրավունքներն ունեն, ինչ վոր խորհուրդների համագումարը։ Ովքե՞ր են ընտրվում խորհուրդների համագումարներում և գործկոմներում աշխատելու համար։ Ընտրվում են բանվորներ, գյուղացիք (քավոր և միջակ) և մասամբ ել ծառայողներ։ Գավառային գործկոմների յուրաքանչյուր հարյուր անդամից 50-ը բանվոր են, 35-ը՝ գյուղացի, 15-ը՝ ծառայող։

Միևնույն դրությունն ե նահանգներում, առանձին հանրապետությունների, առանձին ավտոնոմ շրջանների խորհրդային համագումարներում և սրանց կողմից ընտրված գործկոմներում։ Նույնն ե կատարվում նաև Հայաստանի խորհուրդների համագումարների ընտրության, կենտրոնականի ընտրության ժամանակ։ Նույնը նաև՝ Անդրկովկասի, Համամիութենական Խորհուրդների համագումարների և կենտրոնականի ընտրություններին։

Բուրժուական յերկրների պարլամենտներում նստած են կապիտալիստների ու կալվածատերերի ներկայացուցիչները։ Մեր յերկրում՝ Համամիութենական Խորհուրդների համագումարներին և ԽՍՀՄ կենտրոնական ուժենքները քննվում և հաստատվում են բանվորների ու գյուղացոց կողմից։ Այդ որենքներով ե կառավարվում յերկիրը։ Բուրժուական յերկրներում իշխանությունը ամեն տեղ՝ գյուղում, քաղաքում, նահանգում, գավառում՝ կատարում ե պարլամենտների ու մինիստրների կազմադրությունները, վոր համագումարին և պատկանում կենտրոնական ղեղավարող իշխանությունը ԽՍՀՄ յեց։

տերերի հրամանով։ Մեզ մոտ՝ Համամիության Խորհուրդների մի համագումարից մինչև մյուս համագումարը՝ յերկիրը կառավարում են ԽՍՀՄ կենտրոնական ու ժողովականությունը։ Մրանք ընտրվում են նույն համագումարին և յերկիրը կառավարում են բանվորների ու գյուղացիների ցուցմունքով։

Մեր յերկրի Խորհրդային իշխանությունը ծառայում ե միլիոնավոր բանվոր և գյուղացի աշխատավորության շահերին։ Այդ ե Խորհրդային իշխանության հիմնական իմաստը։ Դրանով մեր իշխանությունը տարբերվում ե հին կառավարությունից և բոլոր կառավարություններից, վոր գոյություն ունեն աշխարհի յերեսին և վորտեղ գեռ չկա Խորհրդային իշխանություն։ Դրա պատճառն այն ե, վոր բուրժուական յերկրներում իշխանության գլուխ կանգնած են կապիտալիստները, այստեղ բուրժուազիան իր դիկտատուրան ե ուժեղացնում, իսկ մեր յերկրում բանվորական դիկտատուրա յե, վոր հենքում ե գյուղացիական մասսաների վրա։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ովքե՞ր են ընտրում գյուղխորհուրդները։

Ովքե՞ր են ընտրում գավառամասային գործկոմներ։ Գլխավորապես ո՞վքեր են քաղաքային խորհուրդներում նստած։ Ո՞վքելի իրավունք ունի՝ գավկործկոմը թե՞ գավառային խորհուրդների համագումարը։

Վ՞ո՞ր համագումարին և պատկանում կենտրոնական ղեղավարող իշխանությունը ԽՍՀՄ յեց։

ԲԱՆՎՈՐ ԴԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ԳՅՈՒՂԱԾԻՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՃՐԴԱ-
ՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ.

Խորհրդային իշխանությունը աշխատավորության իշխանությունն ե, այսինքն՝ բանվորների և գյուղացոց։ Յեթե այդպես ե, ապա ինչո՞ւ մենք ասում ենք, թե մեր յերկրի իշխանությունը կոչվում ե բանվոր գասակարգի

դիկտատուրա, և վոչ թե բանվորի և գյուղացու դիկտատուրա:

Յերբ բանվոր դասակարգը դեռ գյուղություն չուներ, գյուղացիությունը շատո անգամ և ապստամբել կալվածատերերի դեմ, բայց ամեն անգամ ել անհաջող: Գյուղացոց ապստամբությունները միշտ վերջանում եյին պարտությամբ—բանտարկությամբ, սպանությամբ, կախաղանով: Թագավորական իշխանությունը գյուղացիության վզին նորից դնում եր հին լուծը: Նորից սկսվում եյին հին չարքաշ որերը: Միևնույն կերպ են վարվել նաև ֆրանսիայի և Գերմանիայի թագավորներն իրենց ժամանակ՝ իրենց դեմ բարձրացող և ապստամբվող գյուղացիների նկատմամբ:

Միևնույն վիճակն են ունեցել նաև վոչ-ոռուս գյուղացիների ապստամբությունները: Որինակի համար՝ չյուսի սային կովկասի ժողովուրդները, վոր գլխավորապես գյուղացիներ են, մոտ հիսուն տարի շարունակ կռիվ մղեցին ցարական կառավարության դեմ, բայց վերջիվերջո նրանց ճնշեցին և վարվեցին նրանց հետ այնպես, ինչպես մյուս գյուղացիների հետ:

1905 թվին Ռուսաստանի զանազան գավառներում, նահանգներում գյուղացիք ապստամբեցին կալվածատերերի դեմ: Գյուղացոց ապստամբությունը վերին աստիճանի անկազմակերպ եր: Մի նահանգում, որինակ՝ ապստամբում եյին գարնանը, մյուսում՝ աշնանը կամ ձմեռը: Նույն տարին մեծ քաղաքների բանվորությունը հայտարարեց գործադուլ: Բանվորները կամենում եյին տապալել ցարական կառավարությունը, ձեռք բերել քաղաքական իրավունքներ: Բանվորները լավ գիտեյին, վոր միայն այդ կարող ե իրենց դրությունը լավացնել, ինչ-պես և գյուղացոց դրությունը: Գյուղացիք վոչ միայն բանվորներին չոգնեցին, այլև ամեն կերպ խանգարեցին: Գյուղացի յերիտասարդները, վոր ցարական բանակում զինվոր-

ներ եյին, գնդակահարում եյին հեղափոխական բանվորներին: Հենց վոր ցարական իշխանությունը կարողացավ բանվորներին հաղթել, իսկույն գյուղացոց ապստամբությունները առանց դժվարությամբ:

Կալվածատերերի՝ գյուղացոց կողմից գրավված հողերը հետ խլվեցին, իսկ կալվածատերերի մնասված և այրված ագրարակների փոխարեն կառավարությունը փող բաց թողեց նրանց*):

Այդ բոլոր փորձերից հետո՝ միայն պարզվեց, վոր գյուղացիությունը ինքը՝ առանց մյուս դասակարգի ողնության՝ չի կարող պայքար մղել կառավարության դեմ և նրան հաղթել: Ճիշտ ե, գյուղացիությունը իր քանակով մեծ ե, բայց անկազմակերպ: Գյուղացու միակ դաշնակիցը կարող ե բանվորը լինել: Յեվ ահա թե ինչու: Բանվորները քաղաքում հավաքված են միասին, կան գործարաններ, վորտեղ 10—15 հազար բանվոր ե աշխատում: Կան գործարանային քաղաքներ, վորտեղ բանվորների թիվը մինչև 500.000-ի յե համառում: Պարզ ե, վոր այդպիսի քաղաքներում և գործարաններում բանվորների մեջ ուժեղանում ե ընկերակցության զգացմունքը: Նրանք՝ աշխատելով միասին՝ աշխատանքի ժամանակ սերտ կերպով կապված լինելով իրար հետ, հեշտությամբ կազմակերպվում են և միացած ուժեղով պայքար են մղում իրենց դասակարգային թշնամու՝ կապիտալիստների դեմ: Քաղաքներում բանվորները հետևում են աշխարհի անցուղարձին: Նրանք թերթեր են կարդում, դատում և քննում կառավարության գործներությունը: Յերեսուն-քառասուն տարի սրանից առաջ բանվորական խմբակներում սկսեցին ուսումնասիրել այսպիսի հարցեր—ի՞նչ ե սոցիալիզմը, ի՞նչ ե կո-

*) Այս մասին կարդա՝ «1905 թ. մեր առաջին հեղափոխությունը», Մոսկվա, 1926 թ., Հրատ. ԽՍՀՄ Ժողովուրդների Միության Կենտր. Հրատարակչություն:

մունիզմը։ Այդ խմբակներում աշխատողներից շատերը այժմ մեր հեղափոխության ղեկավարների շարքերումն են դանվում։ Նույն խմբակներում իր աշխատանքն սկսեց ընկ. լենինը։

1917 թվին, յերբ թագավորի սկսած պատերազմի (վոր միայն կապիտալիստների ոգտի համար եր սկսված) իսկական նպատակը զյուղացիք իմացան, միայն այդ ժամանակ նրանք հասկացան, վոր թագավորն ու կապիտալիստները նրանց թշնամիներն են, և նրանք միացան բանվորներին ու թագավորին տապալեցին։ Բայց շատ չանցավ, յերբ զյուղացիք նորից սկսեցին տատանվել։ Հարկավոր եր 6—7 ամիս ժամանակ, վորպեսզի բանվորները կարողանային զյուղացոց ապացույց տալ, թե կերենսկու կառավարությունը ժողովրդական մասսաների թշնամին ե։

Թեև կերենսկու ժամանակ թագավոր արդեն չկար, բայց իշխանությունը ամբողջովին գտնվում եր կապիտալիստների ձեռքում և թագավորի սկսած պատերազմը շարունակվում եր։

1917 թվի Հոկտեմբեր ամսին բանվոր դասակարգն իր ձեռքն առավ իշխանությունը։ Նա հայտարարեց, վոր բանվոր դասակարգին հարկավոր ե իշխանությունը նրա՝ համար, վորպեսզի վոչչացնի ամեն տեսակի շահագործում, դասակարգային բաժանում։ Բանվորական կառավարությունը անխնա կերպով պիտի վոչչացնե շահագործողներին և սոցիալիստական իրավակարգ կազմակերպե ամբողջ աշխարհում։

Հենց դրա համար ել՝ առաջին հերթին՝ գործարանները, հողը իրենց նախկին տերերի ձեռքից խլվեցին։ Կառավարությունը մշակեց մի շարք միջոցներ, վորոնք ապահովում երին աշխատավորության դրությունը, վորպեսզի հին կառավարությունը և շահագործողները այլևս հետ չդառնան։ Չե՞ վոր սոցիալիզմ կառուցելու համար բավական չե, վոր

գործարաններն ու հողը աշխատավորության հանձնվեն։ Հարկավոր ե բոլորովին վերացնել ամեն մի միջոց, վորով կարող են ոգտվել շահագործողները և նորից հետ գալ։ Հարկավոր ե, վորպեսզի գործարաններն ու հողը կարողանան ավելի մթերք տալ աշխատավորությանը։ Իսկ դրան կարելի յե հասնել միայն այն դեպքում, յեթե հին գործարանները վերաշնվեն նոր ձևով և տեխնիկայի վերջին խոսքի համաձայն։ Պետք ե բաց անել նորանոր գործարաններ, վորտեղ աշխատեն գիտության վերջին խոսքով կառուցված մեքենաներ։ Ինչքան գործարանը գիտական խոսքի համաձայն ե շինված, այնքան քիչ աշխատանք ե խլում բանվորներից և ավելի ու ավելի ապրանք ե բաց թողնում։ Մեծ գործարաններում տեղի ունի աշխատանքի խիստ և վորոշ բաժանումն։ Ամեն մի բանվոր ունի իր առանձին գործը։ Վոչ մի բանվոր առանց մեքենայի և իր ընկեր բանվորների ոգնության վոշինչ չի կարող անել։ Այդպիսի դրությունն ստիպում ե բանվորներին ավելի սերտ կերպով իրար հետ կապվել, միանալ և միասին կոլեկտիվ աշխատել։ Իսկ կոլեկտիվ աշխատանքն ունի այն առավելությունը, վոր այդտեղ ուժը միության մեջ ե։ Քանի բանվորների թիվը շատանում ե, քանի նրանց ընկերական, կոլեկտիվ աշխատանքը լայնանում ե, այնքան նրանց կազմակերպությունն ուժեղանում ե, նրանց միությունը դառնում ե անհաղթ։

Կոմունիստական կուսակցության ծրագրի մեջ ասված ե. «Քաղաքային արդյունաբերական պրոետարիատի՝ (վորպես աշխատավոր մասսաների մի այնպիսի զանգվածի, վորը համախմբված ե միատեղ, իրար հետ միացած ե, զարգացած ե և կովում կոփված) ղեկավարող դերը ամբողջ հեղափոխության ընթացքում արտահայտվեց թե՛ խորհուրդների առաջացման հարցում և թե այդ խորհուրդների՝ վորպես պետական իշխանության որգանների՝ զար-

գացման ամբողջ ընթացքում։ Կոմունիստական կուսակցությունը, բացարելով գյուղի սոցիալիստական կազմակերպության գժվարությունների հետ կապված այդ առավելությունների ժամանակավոր բնույթը, պետք ե ձգտեարդյունաբերական պրոլետարիատի այդ դրությունը անսայթաք և սիստեմատիկ կերպով ոգտագործել նրանամար, վորպեսզի գյուղական պրոլետար և կիսապրոլետար ամենահետամմաց և ցրված մասսաներին, ինչպես և միջակ գյուղացիությանը ավելի սերտ միացնի առաջավոր բանվորների հետա։

Լենինը մեզ սովորեցնում եր, վոր պրոլետարիատի գիշտատուրան բանվորների և գյուղացիական մասսաների միությունն ե՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ, և վոր բանվոր դասակարգի ղեկավարությունը այդ միության մեջ անհրաժեշտ ե՝ բուրժուական իշխանությունը տապալելու համար, յերբ նա կփորձե նորից ձեռք բերել կորցրած իշխանությունը, և վերջապես նրան համար, վորպեսզի բանվորը գյուղացու հետ միասին կառուցե սոցիալիզմ։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ նշանակություն ունի հեղափոխության համար այն հանգամանքը, վոր բանվորները գործարաններում միասին են աշխատում։

Ի՞նչո՞ւ բանվորները իրար հետ ավելի յեն միացած, քան գյուղացիք։ Ի՞նչն ե պատճառը, վոր բանվորներն ավելի յեն զարգացած, քան գյուղացիք։

Ի՞նչո՞ւ գյուղացին առանց բանվորի ոգնության չի կարող խեղճությունից ազատվել։

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ Ի՞ՆՉՊԵՍ Ե ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՈՒՆԵՑՄԾ ԻՐ ԴԱՇԻՆՔԸ.

Բուրժուազիան իր գիշտատուրայի մասին միշտ աշխատում ե լոել։ Նա իր իշխանությունը անվանում ե դեմոկրատական, ժողովրդական, իսկ փաստորեն վոչ մի միջոցի առաջ նա կանգ չի առնում, վորպեսզի բանվորներ

ըին և գյուղացիներին իշխանությանը մոտ չթողնի։ Բանվոր դասակարգը բացարձակորեն հայտնում ե, վոր մեր յերկրում նա իր գիշտատուրան ե իրականացնում, յերկիրը կառավարելու համար մասնակից ե անում բոլոր աշխատավորներին, առաջին հերթին՝ աշխատավոր գյուղացիությանը։

Լենինն ասում եր, վոր սոցիալիզմ կառուցել կարող են միայն միլիոնավոր մարդիկ։ Մեր յերկրի գյուղացիությունը միլիոնների յե համար։ Առանց նրանց մասնակցության սոցիալիզմ կառուցել չի կարելի։

Լենինն ասում եր, վոր Խորհրդային պետության պրոլետարիատի նպատակն ե՝ միացնել, կազմակերպել աշխատավորության մասսաները և նրանց առաջնորդել։ Առաջին հերթին հարկավոր ե կազմակերպել ցրված, չքավոր և միջակ գյուղացիությունը։ Առանց այդ աշխատանքի, պրոլետարիատը չի կարող սոցիալիզմի համար բայց հավաքել, կազմակերպել աշխատավոր մասսաներին պրոլետարիատը կարող ե միայն այն ժամանակ, յեթե նա նրանց հետ աշխատում ե, նրանց քաշում ե շինարարական աշխատանքի մեջ, պետությունը կառավարելու գործին մասնակից ե դարձնում։ Ահա թե ինչու, ինչպես լենինն եր ասում, Խորհրդային իշխանությունը կյանքում կիրառում ե իսկական դեմոկրատիա։ Մեր իշխանությունը իսկական ժողովրդական իշխանություն ե, վորովհետև նրա շինարարական աշխատանքներին, նրա կառավարության գործին մասնակցում են աշխատավորության ամենալայն խավերը՝ բանվորներն ու գյուղացիք։

Պետության կառավարման գործին մասնակցելով, չքավոր գյուղացիք և միջակները սովորում են, թե ինչպես և ի՞նչ միջոցներով կարելի յե կռվել աղքատության, չքավորության դեմ և թե ի՞նչ միջոցներ կան՝ հասնելու համար ապագա ազատությանը—սոցիալիզմին։

Այդպիսով՝ աշխատավորության միլիոնավոր մասսա-

ըը իրենց հայացքներով, իրենց կազմակերպվածությամբ
հետզհետե ավելի ու ավելի՝ յեն մերձենում բանվորներին,
նրանցից սովորում, ընդհանուր գործում կազմակերպվում:
Յեվ յերբ չքավոր ու միջակ գյուղացիությունը իր աշխա-
տանքով, իր կազմակերպվածությամբ, իր հայացքներով
հավասարվի բանվորին, այն ժամանակ այլևս բանվոր դա-
սակարգի ղեկավարության կարիքը չի լինի: Այդ մասին կո-
մունիստական կուսակցության ծրագրի մեջ ասված ե, վոր
բանվոր դասակարգի արտոնությունները ժամանակավոր
ընույթ են կրում և նրանք կվոչնչացվին, յերբ նոր կյանքի
պայմանները կհաստատվեն և նորմալ ընթացք կատանան:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Խնչու առանի
գյուղացիության մասնակցության չի կարելի սոցիալիզմ
կառուցել մեր յերկրում:

Ի՞նչ միջոցներով Խորհրդային իշխանությունը մասնա-
կից և անում գյուղացիությանը պետական գործերին և
տնտեսական շինարարությանը:

Մինչև յերբ կարող ե շարունակվել բանվորների ու
գյուղացիների ընտրական անհավասարությունը:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՑՑԼ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

1. Կազմակերպեցներ հուշ-յերեկոներ և խնդրեցներ ծերե-
րին, վորպեսզի պատմեն, թե իրենք ինչ ապրուստ ունեյին
ցարերի որով:

2. Գյուղխորհրդից կամ գավառամասային խորհրդից
տեղեկացներ, թե ի՞նչ են ստացել գյուղացիք Հոկտեմբերյան
հեղափոխությունից հետո և հետեւցեք, թե ստացածը ի՞նչպես
են ոգտագործելու:

3. Խնդրեցներ գավառամասային և գավառային գործ-
կոմի ծեր ներկայացուցչին, վորպեսզինա ձեզ ղեկուցն գործ-
կոմի գործներության մասին:

4. Բանվորներից ո՞վքեր են աշխատել հեղափոխության
տարիներին ծեր շրջանում և ի՞նչ լավ գործեր են կատարել:

5. Հաշվեցներ, թե վո՞րքան գյուղացիներ կազմել են
արտելներ, ընկերություններ, դարձել են կոոպերացիայի
անդամ: Իմացնեք, թե ի՞նչ ոգուստ են նրանք ստացել դրանից:

ԶՐՈՒԾ յԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՊԵՏՔ Ե ԳՈՐԾԵՆ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ.

Յարական կառավարությունը գյուղացուն պահում եր
տղիտության ու խավարի մեջ, վորովհետև նրան պետք
եր տգետ, հետամնաց գյուղացի: Գործարանատերերին, վա-
ճառականներին և կալվածատերերին պետք եր այնպիսի
գյուղացի, վորը թույլ տար իրեն շահագործելու, վորը
լուռ ու մունջ հպատակվեր ուրյադնիկին:

Իսկ Խորհրդային յերկրին հարկավոր ե գրադետ գյու-
ղացի, քննադատող, քաղաքականալես զարգացած, այնպիսի
գյուղացի, վորը հասկանար թե ինչի՞ և ձգտում Խորհրդային
իշխանությունը, և վորն ոգներ Խորհրդային իշխա-
նությանը՝ նրա դժվար գործում:

Անցյալ գլխում մենք քննեցինք լենինի գլխավոր պատ-
գամն այն մասին, վոր բանվոր դասակարգը և նրա կո-
մունիստական կուսակցությունը պետք ե ղեկավարեն բո-
լոր աշխատավոր գյուղացիներին, հետզհետե ավելի ու
ավելի նրանց մասնակից անեն պետության և տնտեսու-
թյան կառավարության գործին:

Այստեղ պետք է հասկանալ ամենազլխավորը, ինչի մասին հաճախ ասում եր Լենինը. «Մեր կուսակցությունը և կոմյերիտմիությունը վոչ միայն չեն ձգտում իրենց ուսերի վրա բառնալ հասարակական ամբողջ աշխատանքը և վերջինից հեռու պահել լայն մասսաներին, այլ ընդհակառակը, կոմունիստներն ու կոմյերիտականները պարտավոր են հարյուր հազարավոր բանվորներին ու գյուղացիներին համախմբել ու կազմակերպել և հասարակական աշխատանքներին մասնակից անել: Մտածել, վոր կարելի ե սոցիալիզմ կառուցել միայն կոմունիստական ուժերով, առանց անկուսակցական բանվորների և գյուղացիների լայն մասսաների մասնակցության, այդ—դատարկ ինքնախարեյություն ե»: Այսպես ե ուսուցանում ընկ. Լենինը:

Իսկ խորհուրդները հանդիսանում են իշխանության մի այնպիսի ձև, վորի մեջ խորը կերպով պետք ե ծավալվեն ու զարգանան պրոլետարական մասսաների և չքափոր ու միջակ գյուղացիության լայն խավերի ուժերը:

Այժմ, յերբ գյուղական տնտեսությունն արդեն վոտքի յե կանգնել և դուրս յեկել քայքայված վիճակից, վորի մեջ նրան ձգել եր պատերազմը, գյուղացիությունը սկսել ե յերեան բերել մեծ ցանկություն՝ հասարակական գործերով վրադվելու: Այդ յերեսում ե, որինակ, նրանից, վոր գյուղում կոմյերիտմիությունն աճում ե վոչ թե որերով, այլ ժամերով, այդ յերեսում ե նրանից, թե ինչպես հետզհետե ավելանում ե դպրոցի, խրճիթ-ընթերցարանի, լրագրի պահանջը, ուժեղանում ե ձգտումը դեպի կոռակերացիան:

Գյուղացիության քաղաքական ակտիվության աճումը պարզ յերեսում ե մասավանդ Խորհուրդների վերընտրություններից: Խորհուրդների վերընտրությունները գյուղում (վորոնք տեղի յեն ունենում ամեն տարի) ներկա տարում ցույց տվին, վոր գյուղացիությունը (չքափոր ու

միջակ գյուղացին) տարեց տարի ավելի ու ավելի ուշադրությամբ յե վերաբերվում դեպի իր խորհուրդները: Որինակ՝ անցյալ տարվա (1925 թվի), վերընտրություններին ամբողջ Խորհրդային Միության մեջ մասնակցել են գյուղական ընտրողների ամբողջ կազմից 41%, իսկ ներկա տարում (1926 թ.) ընտրություններին մասնակցել են գյուղական ընտրողների արդեն 47%:

Անցյալ զրույցի մեջ ասացինք և թվերով ապացուցեցինք, վոր գյուղական խորհուրդները կազմված են չքափոր և միջակ գյուղացիներից: Ասացինք, վոր մեր պրոլետարական ժողովրդապետությունը, մեր Խորհրդային իշխանությունը կայանում ե հենց նրանում, վորպեսզի բանվորները և չքափոր ու միջակ գյուղացիները հետզհետե ավելի ու ավելի մասնակից լինեն յերկրի և տնտեսության կառավարության գործերին:

Մենք այդ ուղղությամբ ի՞նչ հետևանքների յենք հասել: Այն, ինչ վոր կատարվել ե մեր յերկրում, վոչ մի բան դրա հետ աշխարհումս համեմատվել չի կարող: Յեվսակայն այդ քիչ ե: Զե՞ վոր ինդիրը միայն նրանում չե կայանում, վոր, որինակ՝ չքափոր գյուղացու կամ հետամնաց գեղջկունու համար լայն ճանապարհ բացվի դեպի խորհուրդները: Մենք գիտենք, վոր գյուղական չքափորությունը, դա—գյուղացիության ավելի հետամնաց, խավար, կարիքների տակ կորացած, կիսագրագետ, անկուլտուրական դասն ե, և նրա ակտիվությունը ավելի թույլ ե, քան գյուղական զորբաների ակտիվությունը, իսկ մենք միևնույն ժամանակ պետք ե ճգնենք, վոր գյուղացիության չքափոր մասը կարողանա իրոք մասնակցել պետությունը կառավարելու գործին:

Նույնը և գեղջկունիներին խորհուրդների մեջ քաշելու հարցում: Խորհրդային իշխանությունը գեղջկունիներին ևս տվել ե բոլոր իրավունքները՝ գյուղացիներին

համահավասար, բայց անցյալից ժառանգած իր հետամմացության պատճառով, գեղջկուհին չի կարողանում այդ բոլոր իրավունքները լրիվ ոգտագործել:

Մեր կոմունիստական կուսակցությունն ամեն կերպ աշխատում ե գյուղի չքավորներին պաշտպանել կուլտակաների լծից, ոգնել չքավորներին, նրանց (ինչպես և առաջավոր ակտիվ միջակ գյուղացիներին) կազմակերպել խորհուրդների շուրջը, իրոք մասնակից անել հասարակական գործերին:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ կոմունիստաների և կոմյերիտականների գլխավոր խնդիրը պետք է լինի գյուղացիներին խորհուրդների շուրջը համախմբելն ու կազմակերպելը:

Ինչո՞ւ դանդաղ ե գնում չքավոր գյուղացիներին կազմակերպելու աշխատանքը:

Խորհրդային աշխատանքներին ինչո՞ւ պետք ե մասնակից անել գեղջկուհուն:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅՔԻ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՅՅՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՅՆ ԽԱՎԵՐԻՆ
Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՍՆԱԿՑ
ԱՆՈՒՄ ՅԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱ-
ՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻՆ.

Մեր կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը իրենց նպատակ են դրել ավելացնել խորհուրդների մեջ մտած և մինչև այժմ խորհրդային աշխատանքին ակտիվ մասնակցություն ցույց տվող անկուսակցական գյուղացիների թիվը: Խորհուրդների թերություններից մեկը գյուղում հանդիսանում ե այս, վոր ամբողջ աշխատանքը ծանրացած ե մի բուռն աշխատավորների վրա, վորոնք և համարյա մենակ են տանում աղմինիստրատիվ պաշտոնները: Մինչդեռ գյուղում յերկան են գալիս գյուղացիների այնպիսի խմբեր, վորոնք խորհրդային որգաններում ունեցած իրենց մասնակցությամբ դրանց ոգնում են

աշխատանքը բարվոքելու և աշխատացնելու: Դրանք՝ առաջավոր գյուղացիներն են, վոր արդեն սովորել են գնահատել տեղական հիմնարկությունների գործնեյությունը Խորհրդային իշխանության ընդհանուր քաղաքականության տեսակետից, դրանք՝ լրագրներով, կենտրոնական և գավառային իշխանության վորոշումներով ու հրամաններով հետաքրքրվողներն են: Կապված լինելով յերկրագործական աշխատանքի հետ և լավ իմանալով գյուղացիական տնտեսության առորյա կարիքները, —անկուսակցական գյուղացիները, լայն մասնակցություն ունենալով խորհրդային աշխատանքին, շատ մեծ ոգուտ կարող են տալ գյուղական խորհուրդներին:

Առաջ քաշել գյուղացիության չքավոր և միջակ խավերից այնպիսիներին, վորոնք կապված են գյուղատընտեսության հետ, վորոնք ընդունակ և ոգտակար են՝ վորպես գյուղապորդրի, գավառամասային խորհրդի անդամ, առաջավոր գյուղացիներին մասսայորեն մասնակից անել խորհրդային շինարարության առանձին խնդիրներին վերաբերող զանազան հանձնաժողովների աշխատանքներին, —այդ ձեռվ կարելի յե Խորհուրդների շուրջը անկուսակցական լայն մասսա ստեղծել: Անկուսակցական ակտիվիստների արած բոլոր առաջարկները պետք ե քննվեն ուշադրությամբ. Նրանց քննադատությունը՝ իշխանության ներկայացուցիչների կողմից կատարած անկանոնությունների և որինազանցությունների մասին, ինչ չափով վոր դա իրավացի և նպատակահարմար ե, պետք ե ոգնի աշխատանքի մեջ յեղած թերությունները վերացնելու:

Մեր աշխատանքի թերությունը գյուղում կայանում ե հենց նրանում, վոր գյուղի տնտեսական կյանքի դեկավարությունը տեղական խորհուրդների կողմից դեռ ևս անբավարար ե: Խորհրդային որգաններում ունեցած իրենց մասնակցությամբ դրանց ոգնում են

զիրներում առաջ անցնեն, վորպեսզի նրանք կարողանա՞ն դրան ուղիղ ընթացք տալ: Միայն ա՛յդ ժամանակ նրանք գյուղացիության աչքում մեծ հեղինակություն ձեռք կբերեն և վստահություն կվայելեն:

Գյուղական խորհուրդների, գավառամասսային խորհուրդների աշխատանքներում պետք ե ճգնել հասնել այնպիսի վիճակի, վոր գյուղացիական մասսան տեղյակ լինի նրանց աշխատանքներին, տեսնի և հասկանա, թե գյուղացիների համար ինչ չափով ե ոգտակար նրանց աշխատանքը, վորպեսզի նա կարողանա գնահատել, թե ինչն ե վատ և ինչը՝ լավ:

Ի՞նչպես և ո՞վքեր են կազմում, որինակ գյուղական տնտեսության զարգացման պլանը կամ գավառամասային բյուջեն (մուտքի և յելքի հողվածները), ի՞նչու համար ե այդ կազմվում, ո՞ւմ ե այդ հարկավոր,—այդ մասին գյուղացիությունը պետք ե անպատճառ իմանա, և վոչ միայն իմանա, այլ և մասնակցություն ունենա այդ պլանները կազմելու աշխատանքում, դրանց քննադատությանը և կիրառմանը: Իսկ իրականության մեջ լինում ե այնպես, վոր տնտեսական առաջնակարգ նշանակություն ունեցող և գյուղացիությանը հետաքրքրող հարցերը նրան չեն բացատրում, գյուղացիությանը թույլ չեն տալիս, վոր նա մասնակցե այդպիսի խնդիրների վորոշումներին:

Հաճախ պատահում են նաև այնպիսի գյուղասորհուրդներ և գավառամասային խորհուրդներ, վորոնք իրենց աշխատանքը տանում են գյուղացիությունից մեկուսացած. այդ նշանակում ե, վոր գյուղացիությունը տեղեկություն չի ունենում իր լիազորների աշխատանքի մասին և հաճախ այնպես ե լինում, վոր հենց իրենք՝ խորհրդային որդանները՝ գյուղում չեն իմանում, թե գյուղն ինչ կարիքներ ունի և ինչ խնդիրներ են նրան զբաղեցնում:

Որինակ՝ յերբ գյուղը հետախուզող հանձնաժողովը հարց ե ապել գավառամասային խորհուրդներից մեկին, թե ազգաբնակչությունը ինչ չափով կարիք ունի հացի, գութանների, սերմացուի և այլն, հողբաժանմունքի վարիչն այսպիսի պատասխան ե տվել. «Յես չգիտեյի, վոր նման պարտականություններ ունեմ. դրանց մասին ինձ վոչ վոք չի ասել, ուստի և յես այդ հարցերի մասին վոչինչ չեմ հոգացել»: Գավառամասային գործկոմի յերկրորդ անդամը (ֆինանսական բաժ. վարիչը), այն հարցին, թե ինչպես պետք ե հաշվել գյուղատնտեսական հարկը, պատասխանում ե. «Յես այդ մասին վոչինչ չգիտեմ: Յես վոչ վոքի չեմ բացատրում»:

Իսքնըստինքյան հասկանալի յե, վոր խորհրդային այդպիսի աշխատողները և այդպիսի գործկոմները գավառամասի տնտեսական և քաղաքական կյանքը ղեկավարել չեին կարող և գյուղի տնտեսական ու քաղաքական կյանքն ընթացել ե առանց նրանց ղեկավարության:

Գյուղացիության տնտեսական կարիքներին անտեղյակ լինելուց բացի, խորհրդային աշխատանքը գյուղում ունեցել ե նաև ուրիշ հիվանդություններ:

Նրանցից գլխավորը մենք համարում ենք «ռազմական կոմունիզմի» մասցորդները: Այդ ի՞նչ հիվանդություն ե: Հիշեցեք, թե գյուղում գլխավորապես ինչումն եր կայանում աշխատանքը քաղաքացիական կովի տարիներում: Այդ տարիներում ամբողջ աշխատանքը կազմում եր այն, վոր կուլակների թագցրած հացը գտնեյին, բանակից փախած գեղերտիրին, թագնված հականեղափոխականին զըտնեյին: Այն ժամանակ կոմունիստի, կոմյերիտականի կամ կարմիրբանակայինի հրամանը փոխարինում եր գյուղական կամ գավառամասային գործկոմի աշխատանքին: Անկուսակցական գյուղացիության լայն խավերը, գյուղական տընտեսության ավելումից ընկճված, խորհուրդներում հա-

մարյա թե չելին մասնակցում։ Քաղաքացիական կատաղի կովի պայմաններում, յերբ յերկրում լարված դրություն եր տիրում, գյուղը ղեկավարվում եր աղմինիստրատիվ ձնշման միջոցով, հրամանի միջոցով։ Այսպես եր քաղաքացիական պատերազմի, ավելումի և քաղցի տարիներում։ Այժմ դրությունը միանգամայն այլ ե. նախ՝ կոմունիստական կուսակցությունը և կոմյերիտմիությունը ճգնում են, վորպեսզի կոմունիստներն ու կոմյերիտականները դադարեն գյուղում խորհրդային հասարակայնության հրամանատարներ ու աղմինիստրատորներ լինելուց ու դառնան գյուղական ղեկավարներ, կազմակերպիչներ, վորոնց շուրջը, խորհուրդների միջոցով, հրամախմբվի ամբողջ միջակ ու չունեսող գյուղացիությունը։

Յերկրորդ՝ կուսակցությունն ու կոմյերիտմիությունը ճգնում են, վոր գյուղում խորհուրդները դառնան իշխանության լիակատար իրավատեր և միակ որդաններ, ճըգնում են՝ վորպեսզի նրանց ամբողջ աշխատանքը վերակառուցվի Խորհրդային դեմոկրատիայի հիման վրա, գյուղացիության գլխավոր մասսայի՝ դեպի նրանց տածած վստահության հիման վրա։

Յերրորդ՝ կուսակցությունը և կոմյերիտմիությունը ճգնում են գյուղում ամբողջովին և լայն կիրառել հեղափոխական որբնականությունը։

Վերջին յերեք տարիների ընթացքում այդ ինդիրներն իրագործելու տեսակետից շատ բան ե արված։ Կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը գործ են դրել օրենսդրական և բացատրական բնույթի մի շարք միջոցներ։ Գյուղի կուսակցականներն ու կոմյերիտականները հետզիետե ավելի լավ են ըմբռնում կուսակցության քաղաքականության կուրսը գյուղում։ Սակայն, գյուղական բջիջներից, գյուղխորհուրդներից ու գավառամասային խորհուրդներից վորմանք, այլ և գյուղական աշխատավորներից

վորմանք դեռ մինչև այսոր ել «ռազմական կոմունիզմի» մասցորդներից չեն բժշկվել։

Դեռևս հազվագյուտ չեն այնպիսի դեպքեր, յերբ կուսակցական կամ կոմյերիտական բջիջը փոխում կամ նշանակում ե աշխատավորներին առանց այն որդանի, վորի կողմից նրանք ընտրված են յեղել, ընտրողների կամքին հակառակ՝ նրանց վզին են փաթաթում իրենց թեկնածուներին և այլն։

Դեռ հազվագյուտ չեն նաև այնպիսի դեպքեր, յերբ գավառամասային և գյուղական գործկոմիները խանգարում են հեղափոխական որբնականությունը, որինակ՝ հետապնդում ու հալածում են նրանց, վորոնք քննադատում են Խորհրդային իշխանության զանազան անկանոն գործերը, գյուղացիությունից անորեն տուրքեր են գանձում, քըմահամ բանտարկություններ կատարում, վախեցնում և այլն։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ո՞ւմ կարելի յե համարել գյուղի ակտիվ աշխատող։

Ինչո՞ւ պետք ե ճգնել, վոր գյուղխորհուրդները, գավառամասային խորհուրդները, գավառային խորհուրդները աղդաբնակությանը հրապարակական հաշվետվություն անեն։

Կոմունիստներն ու կոմյերիտականները գյուղում ի՞նչ կերպ պետք ե ձեռք բերեն գյուղացիության վստահությունը։

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ Ի՞ՆՉ ԵՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ

Խորհուրդների աշխատանքն աշխուժացնելու և բարվոքելու նպատակով, մեր կուսակցությունը իր ուշադրությունը դարձրեց նախ նրա վրա, թե տեղերում ինչպես են կատարվում խորհուրդների ընտրությունները և դրանք ինչպես պետք ե կատարել։ Համեմատենք 1924, 1925 և 1926 թվերին կատարված ընտրությունները (ԽՍՀՄ-ի մասշտաբով)։ Խորհուրդների ընտրությունները գյուղում, դեռ 1924 թվին, կուսակցության և Խորհրդային իշխա-

Նության առաջ յերեան հանեցին մեր գյուղական աշխատանքի գլխավոր հիվանդությունները։ Ամենից առաջ պարզվեց, վոր գյուղացիությունն այդ տարում ընտրություններին վերաբերվել ե բավական անտարբեր, և ընտրական ժողովներին ներկա գտնված ընտրողների թիվը ավելի պակաս ե յեղել՝ համեմատած 1923 թ. ընտրողների մասնակցության հետ։ Բայց՝ միևնույն ժամանակ՝ 1924 թ. ընտրությունների հետեանքով, գյուղական խորհուրդներում կոմունիստների տոկոսը խիստ բարձրացավ։

Կոմունիստներ յեվ կոմյերիտականներ կային՝

Մինչեւ 1924 թ.	1924 թվին.
Դյուլմորհուրդներում՝ 6 %,	11 %,
Գավմասային համագումարներում՝ 11½ %,	27 %,
Գավմասային գործկոմներում (ВИԿ)՝ 40 %,	60½ %.

Ի՞նչ են վկայում 1924 թ. այդ յերկու ընտրությունների առանձնատկությունները։ — անկուսակցական գյուղացիության անմասնակցությունը, անտարբեր վերաբերմունքը և միևնույն ժամանակ կոմունիստների թվի ավելացումը Խորհուրդներում։ Դրանք վկայում են այն մասին, վոր կուսակցականների և կոմյերիտականների թիվը ավելացել ե վոչ թե այն պատճառով, վոր ավելացել ե գյուղացիության վստահությունը դեպի կուսակցությունն ու կոմյերիտամիությունը, այլ այն պատճառով, վոր ճընշում ե գործ դրվել, զուով մեջ են քաշել կուսակցականներին և կոմյերիտականներին՝ ընտրողների կամքին հակառակ։

Կուսակցության կենտրոնական կոմիտեն դեռ այն ժամանակ ցուցմունք արեց, վոր այժմ գլխավոր խնդիրը կայանում ե վոչ թե նըանում, վոր ինչ միջոցներով ել լինի՝ Խորհուրդներում ավելացվի կոմունիստների թիվը, այլ նըանում, վոր կոմունիստական կուսակցությունն ամբող-

ջովին վերցրած, ինչպես նաև Խորհուրդներում աշխատող կոմունիստները ավելի՝ լավ ղեկավարեն գյուղացիական մասաւոյն։

Այս բացատրությունների հետ միաժամանակ, խորհրդային գծով տրվեցին մանրամասն ցուցմունքներ այն մասին, թե ինչպես պետք է կատարել Խորհուրդների ընտրությունները՝ ազգաբնակչության ակտիվ մասնակցության հիմունքներով։ Բայցի դրանից, մի շարք տեղերում, ուր գյուղացիների մասնակցությունն ընտրություններին անբավարար ե յեղել, այդ տեղերում կատարված ընտրությունները ճանաչվեցին սխալ և նշանակվեցին վերընտրություններ։

1925—1926 թ. ընտրություններին մեծ աշխատանք կատարվեց։ — բացատրվեց կուսակցության քաղաքականությունը գյուղում, գումարվեցին չքավոր գյուղացիության և ակտիվի ժողովներ, լայն չափով տեղի ունեցան գյուղխորհուրդների, գավառամասային խորհուրդների հաշվետվություններ՝ շատ ավելի լավ, շատ ավելի մեծ չափով՝ քան առաջ եր, ազգաբնակչությունը մասնակից արվեց ընտրություններին և այլն։

Թե ինչպիսի հետեանքներ ունեցան գործ դրած այդ միջոցները, կարելի յետեսնել հետևյալից (քաղաքածք մի զեկուցումից)։

«Գյուղացիները հենց վոր իմացան Խորհուրդների վերընտրությունների մասին, իսկույն սկսեցին գյուղխորհուրդների և գավառամասային խորհուրդների կազմի թեկնածուներ վորոշել և դրանց քննադատությամբ զբաղվել։ Այդ քննադատությունները տեղի եյին ունենում և ընտանիքում, և տներում, և փողոցներում, և ճանապարհներում, ուր հավաքված եյին լինում գյուղացիների խմբեր։ Այժմ արդեն Խորհրդի մեջ անցնելը մեծ պատիվ ե։ Իսկ առաջ անց եյին կացնում հենց ենպես, ինդրին անտարբեր վերաբերվելով։

Այստեղ, ուր ժողովական հարյուր մարդուց ավելի չեյին հավաքվում, գրանից հետո հավաքվում եյին յերեք հարյուրից մինչև չորս հարյուր մարդ։ Մասնակցողների ընդհանուր տոկոսը ցույց ե տրված զրույցիս սկզբում։ 1925—1926 թ. ընտրական կամպանյան գյուղում բարվուքց գյուղի դրությունը քաղաքական տեսակետից։ Հետաքրքրությունը դեպի Խորհուրդները խիստ ուժեղացավ։ Վստահությունը դեպի կուսակցությունն անկասկած աճեց։ Կուսակցության կենտրոնական կոմիտեն՝ Խորհուրդների աշխուժացման քաղաքականության հետևանքները (1926 թ. հուլիսին) այսպես գնահատեց։ «Կուսակցության վեցըրած հաստատուն կուրսի հետևանքով, այլ և անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին Խորհուրդներին ավելի մեծ չափով մասնակից անելու հետևանքով, անխուսափելիորեն մի քիչ պակասել ե կոմունիստների տոկոսը մասնավանդ այն Խորհուրդներում, ուր առաջ այդ տոկոսը չափազանց մեծ եր (որինակ՝ քաղաքային Խորհուրդներում)։ Յեվ սակայն՝ վերջին վերընտրությունների հետեւ վանքով կուսակցության դեկավարող դերը խորհուրդներում վոչ միայն չի թուլացել, այլ ընդհակառակը, անկասկած ուժեղացել ե»։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ պետք ե աշխատել վոր Խորհուրդների ընտրություններին ավելի շատ թվով ընտրողներ մասնակցեն։

Ի՞նչ կերպ կարելի յե հաստատուն դարձնել գյուղացիների ունեցած վստահությունը դեպի կուսակցությունն ու կոմիտեմիությունը։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱՄԱՍՍԱՅԻՆ ՔՈՐՄԿՈՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՅՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԼ.

Մենք քննեցինք գյուղական խորհուրդների աշխուժացման և աշխատանքի բարվոքման գլխավոր հարցերը։

այժմ տեսնենք, թե ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն գյուղական խորհուրդները և գավառամասային գործկոմները։

Գյուղում հաճախ այնպես ե լինում, վոր գյուղական խորհուրդն իսկի չի յերևում, նրա ձայնը չի լսվում, իսկ ամբողջ գյուղխորհրդի փոխարեն գործում ե նրա նախագահը կամ քարտուղարը։ Հազվագյուտ չեն և այնպիսի դեպքեր, յերբ գյուղխորհուրդը անգործության ե մատնըրված լինում, բայց վորովհետև սպասել չի կարելի (հիվանդ հարցերը հուզում են գյուղացիությանը), նախաձեռնությունը բոլոր հարցերում իր վրա յե վերցնում համայնական ժողովը։ Յեվ հենց այստեղ ե, վոր չես կարողանում հասկանալ, թե ով ե գյուղը կառավարում և ով ե պատասխանառ ընդունված վորոշումների համար։

Անհրաժեշտ ե, վոր գյուղխորհուրդները նախապատրաստեյին համայնական ժողովի աշխատանքը՝ նախապես քննեյին այն բոլոր հարցերը, վոր դըմելու յեն ժողովին։

Համայնական ժողովում ընդունված վորոշումների և դրանց իրագործման համար պատասխանառու պետք ե լինի գյուղխորհուրդը։ Ուստի և նա պետք ե քննի համայնական ժողովի արձանագրություններն ու վորոշումները, կյանքում կիրառե այն վորոշումները, վորոնք խորհրդային որենսողությանը համապատասխանում են։ Իսկ վոչ-որինական վորոշումները (համայնական ժողովի կայացրած) գյուղխորհուրդը պետք ե փոխե։ Գյուղական և գավառամասային խորհուրդների պարտականությունն ե հոգալ գյուղի կամ գավառամասի տնտեսական ու կուլտուրական դրության մասին։ Գյուղական և գավառամասային խորհուրդները պետք ե իրենց վրա վերցնեն նախաձեռնությունը՝ գյուղական տնտեսության բարվոքման խնդիրներում, վորպեսզի հողաշնարարությունը տեղի ունենա հողի ողտագործման լավագույն յեղանակների պրոպագանդայի հետ զուգընթացաբար, վոր-

պեսզի ազգաբնակչությունը տնտեսավարության հիմապապենական յեղանակներից անցնի նոր, ավելի շատ յեկամուտ տվող ու ոգտակար յեղանակների:

Հասկանալի յե, վոր միայն գյուղխորհրդի կամ գավառամասային խորհրդի անդամները մենակ՝ գյուղական հետամնացությունը մեղմել չեն կարող: Այս խնդրում պետք են գործի մեջ քաշել գյուղի հասարակական բոլոր կազմակերպությունները և ամբողջ ազգաբնակչությունը:

Գյուղխորհուրդների տնտեսական գործնեյության ծավալման համար քիչ նշանակություն չունի գավառամասային բյուջեն: Այդ ի՞նչ բան ե: Դա—գավառամասային խորհրդի յեկամուտների և ծախսերի ցուցակն ե, պետական և հասարակական միջոցները գավառամասի կարիքների համար ոգտագործելու կարգն ե: Յերբ գավառամասային գործկոմը ղեկավարվում ե իր բյուջեյով, հաշվում ե իր ծախսերն ու յեկամուտները, վորոշում ե՝ թե ի՞նչն ե եյական և ի՞նչը՝ վոչ եյական—ի՞նչի վրա ավելի շատ փող պետք ե ծախսի, ի՞նչի վրա՝ քիչ պետք ե ծախսի, ըստ վորում այդ բոլոր հարցերին մասնակից ե անում տնտեսական տեսակետից շահագրգուված գյուղացիությանը,—այդպիսի գործկոմը գյուղացիությանը հենց դրանով ել մասնակից ե անում գավառամասի կառավարության գործերին՝ նրա համար հասկանալի պարզ միջոցով:

Սակայն գավառամասի տնտեսությունը կարգի բերելուց և գավառամասի բյուջեն կազմելուց հետո ևս նա ելի շատ հոգսեր ունի:

Մի գյուղացի այսպես ե նկարագրում բյուջեյի դրությունն իրենց գյուղում. «Վաստ ե մեր բյուջեյի դրությունը: Տարվա սկզբից մի քանի ամիս հետո բյուջեյի մեջ վեց հազարանոց մի անցք բացվեց և գավառամասի ամբողջ տնտեսական դրությունը խախտվեց: Ծառայողների ոռճիկները չեն վճարում, գրասենյակում թուղթ

չկա: Դպրոցի աշխատանքներն ընդհատումներով են տեղի ունենում: Վառելիք չկա: Գործկոմի կասան դատարկ ե: Զնայած այն հանգամանքին, վոր վեց հազար ոռութեավել ենք ծախսել, սակայն կարեոր պետքերի համար միայն կոպեկներ են տվել. թեև գրասենյակի համար գնել են գրամեքենա, վորը, ի գեղ ասած՝ անպետք դուրս յեկավ: Բյուջեն կազմելու գործում պետք ե մասնակցեն վոչ միայն գավառամասային գործկոմի անդամները, այլ և առաջավոր տնտեսարարները: Ծախսի հողվածները կազմելու և վորոշելու ժամանակ, պետք ե հրավիրել և՛ անասնաբուժին, և՛ դպրոցական ուսուցչին, և՛ խրճիթավարին, պետք ե հարցնել նրանց՝ ինչի՞ համար և ի՞նչքան միջոցներ են պետք»:

Ի՞նչումն ե կայանում մեր գավառամասային բյուջեների մեծամասնության հիմնական թերությունը:

Գավառամասային բյուջեյում խոշոր մաս են կազմում ամեն տեսակի վարչական ծախսեր, նրանք հաճախ կլանում են բյուջեյի մեծ մասը: Ուստի և գավառամասային բյուջեյի ստեղծման և նրա ուժեղացման հետեանքները գյուղացիների աշքին չեն յերեսում:

Իսկ գործը պետք ե այնպես տանել, վոր նույնիսկ ամենափոքրիկ հաջողությունը գյուղացիների համար ակընհայտնի լինի:

Տեղական խորհուրդների ամբողջ գործնեյությունը կարելի յե բաժանել յերկու մասի. դրանք են՝ գյուղի կառավարությանը վերաբերող ինդիքները և գյուղի տնտեսական կուլտուրական գործերը ղեկավարելու ինդիքները:

Առաջին մասին վերաբերում են՝ անմիջական կարգապահությունը, ամեն տեսակի ցուցակագրություն և այլն:

Տնտեսական կուլտուրական գործնեյության ու ղեկավարությանն են վերաբերում՝ 1) հոգատարություն՝ գյուղուն՝ գյուղի բար եկարգության մասին (որի

նակ՝ ճանապարհների շինարարություն, պոստային հաղորդակցություն և այլն). 2) առողջության պաշտպանության հոգատարությունը (որինակ՝ մարդկանց ու կենդանիներին բժշկելը, գյուղի առողջապահական դրությունը, հիվանդանոց, դեղատուն, անասնաբուժական կայան և այլն). 3) հոգատարություն՝ գյուղի լուսավորության մասին։ Այստեղ պետք է հասկանալ անգրագիտության վերացումը, լրագրներին բաժանորդագրվելը, դպրոցի, խրճիթ-ընթերցարանի, գրադարանի պաշտպանությունը և այլն։

Իհարկե, ավելորդ ե ասել, վոր գյուղացին խորհրդային իշխանության մասին դատում ե, նկատի առնելով այն, թե արդյոք լա՞վ ե գործում պոստը, արդյոք ճանապարհները կարգի՞ն յեն բերված, արդյո՞ք բժիշկն ուշադիր ե նայում, արդյո՞ք դպրոցը մաքուր ե, լո՞ւյս ե, տաքացրած ե։ Գյուղացիները մասսաներով խորհուրդների յետելից կգնան միայն այն ժամանակ, յերբ նրանք իրենց սեփական աչքերով կտեսնեն, թե ինչպես ե զարգանում գյուղի տնտեսական-կուլտուրական կյանքը և թե դրանից նրանց ինչ ոգուտ կա։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ ե գավառամասային բյուջեն։

Ինչպես պետք է կազմել գավառամասային բյուջեն։

Գավառամասի տնտեսության համար ի՞նչ կարող ե անել գյուղխորհուրդը, գավառամասային խորհուրդը։

Ի՞նչ կարող ե անել գյուղխորհուրդը, գավառամասային խորհուրդը՝ իր շրջանի կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար։

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՑԵՐՌՈՐԴ ԶՐՈՒՑՑԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

1. Գյուղխորհուրդի կամ գավառամասային խորհրդի մեջ մասնակցող ձեր ներկայացուցչի գեկուցումը դրեք բջիջի ժողովում և քննեցեք։

2. Զերք բերեք ձեր գավառամասի յեկամուտների և ծախսերի ցուցակը (գավառամասային բյուջեն) և քննեցեք այդ նայեցե՛ք, թե քանի տոկոս և հատկացված կուլտուրական ծախքերի։

3. Լսեցե՛ք գավառամասային քաղաքում կոմիտեյում մասնակցող ձեր ներկայացուցչի գեկուցումը իր աշխատանքի մասին։ Նրանից իմացեք, թե գավառամասում քանի՞ անգրագետ կոմյերիտականներ, անգրագետ պատգամավորուհիներ, գյուղխորհրդի անգրագետ անդամներ կան և քննեցեք, թե ձմեռված ընթացքում ի՞նչպես կարելի յե վերացնել անգրագիտությունը դրանց շրջանում։

Ինչու թագավորական կառավարությունը այդպես կուղովտում եր հպատակ ժողովուրդներին:

Ահա թե ինչու:

Մենք արդեն գիտենք, վոր ոռւս գյուղացիության դրությունը ցարիզմի ժամանակ շատ վատ եր: Քանիքանի անգամ ոռւս գյուղացին ապստամբվել ե, ուզեցել ե խլել կալվածատիրոջ հողերը: Ցարական իշխանությունը փոխանակ ինքը խլելու կալվածատերերի հողերը և հանձնելու գյուղացոց, գրավում եր նոր յերկրներ, իրեն վերցնում լավ հողերի մեծ մասը, իսկ մի մասը տալիս ոռւս գյուղացիներից նրանց, ովքեր կցանկանային տեղափոխվել գրաված նոր շրջանները: Այդ կերպ՝ թագավորական կառավարությունը կամենում եր կալվածատերերին պաշտպանել ոռւս գյուղացիների արդար ցասումից: Ճիշտ ե, ոռւս գյուղացին ստանում եր գրաված յերկրի գյուղացու հողը մշակելու համար, բայց այդ ամենը կառավարությունը անում եր հոգուտ կալվածատերերի:

Թագավորական կառավարությունն ուներ նաև մի ուրիշ նպատակ: Զե՞ վոր նվաճված ժողովուրդն ընկնում եր ցարի և նրա ոգնականների՝ ոռւս կալիտալիստների, կալվածատերերի, առևտրականների լծի տակ և ամեն հարմար գեղքին նվաճված ժողովուրդը կարող եր ապստամբել: Վորպեսզի թագավորական կառավարությունը կարողանար կառավարել մի այնպիսի հսկայական յերկիր, ինչպիսին Ռուսաստանն եր, ոռւս գյուղացիների շրթունքին բեղը եր քսում և ուղարկում ծայրագավառները, տալիս եր նրանց հողաբաժիններ, վորպեսզի պետք յեղած գեղքում ոռւս գյուղացուն ոգտագործեր ոտարագգի գյուղացու գեմ: Հիմա պարզ ե, թե ինչու տեղական ժողովուրդը չեր սիրում այն ոռւս գյուղացիներին, վորոնք գալիս եյին իրենց հողերը խլելու: Հպատակ ժողովուրդը, տեսնելով՝ թե ինչպես ոռւս պրիստավը, ուրյադնիկը, դագախը գալիս և իրենց ար-

տերի տերն եյին դառնում, ատում եր բոլոր ոռւսներին: Թագավորական կառավարությունն ու բուրժուազիան շահագրգուված եյին, վորպեսզի Ռուսաստանի ծայրերում ապրող ժողովուրդները վո՛չ տնտեսապես, վո՛չ ել կուլտուրապես չզարգանան:

Ոռւս առևտրականներին ձեռնտու եր, վորպեսզի Սիբիրում ապրող հետամնաց ժողովուրդները չզարգանան և միշտ պարապեն ձկնորսությամբ ու վորապէ: Մուս առևտրականները հետամնաց կիսավայրենի մարդկանցից շատ եժան գնով գնում եյին թանկարժեք մորթիների, ձուկ: Շատ ժամանակ պատահում եր, վոր մորթիների փոխարեն ոռւս չարչին տալիս եր տեղացիներին արագ կամ թութուն: Կովկասում ուղղակի կոպեկներ եյին վճարում պտուղներին և բրդին:

Միջին Ասիայում, ուր տեղացիները բամբակի արդյունաբերությամբ եյին պարապում, ոռւս գործարանատերերը իրենց գործարանները չեյին շինում այնտեղ: Թագավորական կառավարությունը վախենում եր այնտեղ գործարաններ հիմնել: Զե՞ վոր գործարաններում պիտի աշխատեյին բանվորներ, վորոնք կարող եյին կազմակերպվել և մի գեղեցիկ որ ապստամբվել: Քիչ ե, վոր նրանք կարող եյին ապստամբվել, իրենց հետ կառավարության գեմ դուրս կը երեյին նաև ճնշված ժողովրդին: Ահա թե ինչու հին կառավարությունը վախենում եր Ռուսաստանի ծայրագավառներում հիմնել գործարաններ: Ահա թե ինչու հին կառավարությունը աշխատում եր Ռուսաստանի հեռավոր ծայրերը դարձնել կենտրոնական Ռուսաստանի գործարաններին միայն անհրաժեշտ հում նյութ մատակարարող շրջաններ:

Այդպիսի միջոցներով, թագավորական կառավարությունը ծայրագավառների զարգացմանը արգելք եր հանդիսանում, տեղական ժողովուրդներին պահելով տգիտության ու խավարի մեջ:

Վոչոռուս ժողովուրդների համար թագավորական կառավարությունը դպրոցներ վո՛չ միայն չեր բաց անում, այլև ամեն կերպ արգելք եր հանդիսանում: Այդ ժողովուրդները ստիպված եյին իրենց յերեխաներին ոռւս դպրոցներ ուղարկել: Բայց բանը նըանումն ե, վոր ոռւս դպրոցների թիվն ել այնքան շատ չեր, վոր աշխատավոր ժողովրդի զավակները կարողանային ուսում առնել: Յերեխաները ոռւս լեզուն մեծագույն մասամբ չփառեյին և ընդհանրապես հին դպրոցներում սովորելու բան ել չկար: Ի՞նչ եյին սովորեցնում հին դպրոցներում: Զկարծեք թե անհրաժեշտ ոգտակար դիտություններ: Վո՛չ: Այստեղ սովորեցնում եյին աղոթքներ, կրոնական զանազան առասպեկներ: Շատ դպրոցներ գտնվում եյին վանքերի մեջ, իսկ ուսուցիչները՝ տերտերներն եյին: Ի՞նչ ասել կուզե, վոր շատ ժողովուրդներ իրենց հարազատ լեզվով չունեյին թերթեր, գրքեր: Յեթե հին կառավարությունը թույլ եր տալիս տպել գրքեր, ապա այնպիսիները, վորոնցով հնարավոր լիներ թունավորել աշխատավորության դիտակցությունը:

Որուս գործարանատերերին և կալվածատերերին ձեռնըտու եր, վոր Որուսաստանի ժողովուրդներին ստիպում եյին սովորել միայն ոռւսաց լեզուն: Այդ ձեռնըտու եր նրա համար, վորպեսզի հեշտությամբ ոռւս առևտրականը կարողանար իր մուշտարու հետ համաձայնության դալ, իսկ ոռւս վոստիկանը կարողանար հեշտությամբ հրահանգել և կառավարել վոչոռուս ժողովուրդին:

Որուսաստանում ապրող ժողովուրդներին ճնշողը միայն ոռւս գործարանատերը, կալվածատերն ու պետական ծառայողները չեյին: Կուլակը, կապիտալիստը, հարստահրողը—միևնույն ե՝ վոր ազգին ել պատկանելիս լինեն—միշտ ել աշխատավորության դասակարգային թշնամիներն են: Բանից դուրս ե գալիս, վոր, բացի ոռւս հարստահրաբիչներից,

ժողովուրդների աշխատավորական մասսաները ունեյին և իրենց սեփական ազգային հարստահրաբիչները: Հայ, վրացի, հրեա կապիտալիստը նույն չափով հարստահրում եր հայ, վրացի, հրեա աշխատավորությանը, ինչպես և ոռւս կապիտալիստը: Բանվորին և գյուղացուն հարստահրելու գործում բոլոր ազգերի հարստահրաբիչները միանում են: Լենինը գրել ե, թե՝ «և՛ ոռւսը, և՛ հրեան, և՛ գերմանացին, և՛ լեհը, և՛ ուկրայինացին—բոլորը, ով կապիտալ ունի, միացած շահագործում են բոլոր ազգերի բանվորներին»:

Բոլոր այդ շահագործողներին ոգնության եյին գալիս հոգեորականները—քահանաները, մոլաները, ուարքիները, շամանները, վորոնք նստում եյին աշխատավորության ուսին: Նրանք իրենց գործնեյությամբ շատ ոգնում եյին թագավորական ժանդարմիներին և գաղտնի վոստիկաններին՝ ժողովրդին թալանելու և կողոպտելու համար:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչու թագավորական կառավարությանը հարկավոր եյին հարկան ժողովուրդների հողերը:

Ո՞վ եր ոգնում ցարական կառավարությանը՝ թալանել թույլ ժողովուրդներին:

ԻՆՉՈ՞Ի ԲՈՒՐԺՈՒԱԶԻՍՅՈՒԹԻՆ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԱԶԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆԸ.

Թագավորական կառավարությունը, կալվածատերերը, գործարանատերերը միշտ ել վախենում եյին, թե մի գուցե հանկարծ բանվորներն ու գյուղացիք միանան և միասին դուրս դան իրենց դեմ: Ահա հենց այդ պատճառով ել հին կառավարությունը աշխատում եր գտնել միջոցներ, վորպեսզի աշխատավորությունը իր իսկական թշնամիներից ուշադրությունը շեղե: Այդպիսի միջոցներից մեկն ել ազգերի թշնամությունն եր: Թագավորական կառավարությունը ասում եր իր բանվորներին ու գյուղացից՝ տեսե՛ք, թե մենք ինչպես ամեն կերպ աշխատում ենք ոռւսներից:

րին տալ զանագան արտոնություններ։ Մեր կառավարությունը, ասում եյին ոռւս բանվորներին ու գյուղացոց, հայրաբար ե վերաբերվում դեպի ձեզ։ Բայց բոլոր չարիքների պատճառը գիտե՞ք ովքեր են, — հրեաները, թաթարները, հայերը և այլն։ Նրանք, այդ ազգերը, մեզ՝ ոռւներիս, հանգիստ չեն թողնում ապրելու։ Յեթե նրանք չինեյին, մենք շատ հանգիստ կապրեյինք։

Թագավորական կառավարությունը հենց վոր տեսնում եր, վոր բանվորների ու գյուղացոց կողմից վտանգ ե սպառնում կալվածատերերին ու կապիտալիստներին, իսկույն ուժեղացնում եր ազգային թշնամության պրոպագանդան։ Նա այդ ձևով կամենում եր բանվորների և գյուղացոց քենը իրենից հեռացնել, թափել տալ ոտարազգի ժողովուրդների վրա։ Հին կառավարությունը միայն պրոպագանդայով չեր բավականանում։ Նա յերբեմն նույնիսկ պատրաստում եր հատուկ արյունհեղություն։ Նա քանի անգամ պատրաստել ե հրեաների ջարդ, հայ - թուրքական ջարդ և այլն։ Թագավորական կառավարությունը անխընդորեն իր հարվածներն եր ուղղում վոչոռուս ժողովուրդների դեմ։

Այդպես եյին վարվում թագավորական վոստիկանները, կապիտալիստները այս կամ այն ազգի նկատմամբ, վորպեսզի աշխատավորության շարքերում ստեղծեն խառնաշխություն, վորպեսզի իրենք կարողանան շարունակել իրենց շահագործումն ու թալանը։ Զե՞ վոր, յեթե բանվորների և գյուղացոց մի մասը պայքարում ե, նույնիսկ թշնամաբար ե վերաբերվում դեպի մյուս մասը, հեղափոխական պրոլետարիատի շարքերը քայքայվում են։ Կնշանակե՝ ին կառավարությունը հանգիստ կարող եր շարունակել իր գործնեյությունը։

Ոտար ժողովուրդներին շահագործելն ու ճնշելը մի կողմից, մյուս կողմից ել՝ ժողովուրդների մեջ թշնամության

մերմեր ցանելը յուրաքանչյուր կապիտալիստական կառավարության քաղաքականությունն ե, Առանց շահագործման ու կողոպուտի վոչ մի կապիտալիստական կառավարություն գոյություն ունենալ չի կարող։ Մնալիսական կառավարությունը, վոր կապիտալիստների, բուրժուազիայի կառավարությունն ե, հարյուրավոր միլիոն մարդկանց ե շահագործում և հարստահարում Աֆրիկայի, Ասիայի, Ավստրալիայի իր գաղութներում։ Հազարավոր հնդիկ, արաբ, չինացի բանվոր և գյուղացի մեռնում են անզինացի և ֆրանսիացի զինվորների գնդակներից նրա՝ համար, վոր նրանք կամենում են ազատվել ոտարազգի լծից։ Իսկ այդ լուծը՝ իմպերիալիստների լուծն ե, վոր յեվրոպացիք դրել են հետամնաց գաղութային ժողովուրդների ուսերին։ Չինաստանում՝ Շանհայ քաղաքում, յերբ մի չինացի անցնում ե այն փողոցը, վորտեղ յեվրոպացիք են ապրում, դրա համար նրան անզինացի վոստիկանները ծեծում են։ Լեհաստանում լեհները ծաղրանքի առարկա յեն դարձնում ազգային փոքրամասնություններին, վոր ապրում են այնտեղ։ Ռումանիան կառավարությունը գագանաբար ե վերաբերվում դեպի մոլդավացիները, հրեաները։

Մի խոսքով այնտեղ, ուր իշխում ե կապիտալը, այնտեղ գոյություն ունի ազգային ճնշում և հարստահարություն։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ միջոցներով եր թագավորական կառավարությունը ատելություն հարուցանում դեպի ժողովուրդները։

Ինչո՞ւ համար Ռուսաստանում վոչոռուս ժողովուրդներին կառավարությունը թշնամացնում եր իրար հետ կամ ջարդեր կազմակերպում։

ԻՆՉՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԺԵՑ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ,

1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջավեց կապիտալիստների և կալվածատերերի իշխանու-

թյանը։ Նա ազատեց բոլոր աշխատավորներին, նրանց հետ միասին և ճնշված ազգերին։

«Խորհրդային հանրապետությունների հիմնվելու որից աշխարհի պետությունները բաժանվեցին յերկու բանակի՝ կապիտալիզմի բանակ և սոցիալիզմի բանակ։

Այստեղ՝ կապիտալիզմի բանակում՝ ազգային թշնամություն և անհավասարություն, շովինիզմ*), ազգային ճնշում և թալան, իմպերիալիստական գաղանություններ և պատերազմներ։

Այստեղ՝ սոցիալիզմի բանակում՝ փոխադարձ հավատ և խաղաղ կյանք, ազգային ազատություն և հավասարություն, ազգերի յեղայրական ընկերակցություն»։ (ԽՍՀՄ Սահմանադրություն)։

Էնկ. Լենինը իր աշխատանքների մեջ ապացուցում եր, վոր յերբ կապիտալիստները ճնշում են ոտար յերկըների ժաղովուրդներին, դրանով նրանք ավելի՝ յեն իրենց բանվորներին ճնշում։ «Յեվրոպական կապիտալիզմը,— ասում եր նա, — իր ուժը հավաքում ե վոչ թե իր՝ յեվրոպական արդյունաբերական յերկըներից, այլ իր գաղութային կալվածքներից։ Առանց ընդարձակ գաղութների, վոր անհրաժեշտ են ապրանքներ ծախելու և այնտեղից հում նյութեր ստանալու, Անգլիայի կապիտալիստական իրավակարգը չեր կարող դիմանալ և անպատճառ կքայլքայիր։ Ասիայի և Աֆրիկայի հարյուր-միլիոնավոր ազգաբնակչությունը պահելով ստրկի դրության մեջ, անգլիական իմպերիալիզմը միևնույն ժամանակ բուրժուազիայի ճանկերում ե պահում բրիտանական պլոյետարիատին»։

Ահա թե ինչու այնպիսի մեծ նշանակություն ունի հեղափոխական շարժումը գաղութներում, ուր գյուղացիությունը ժողովրդի գլխավոր մասն ե կազմում։

*) Շովինիզմ—ազգային ինքնահավանություն, վոր կապած և ուրիշ ազգերին արհամարհելու հետ։

Վորպեսզի համաշխարհային հեղափոխությունը հաջողություն ունենա, հարկավոր ե վոր արդյունաբերական յերկըների բանվորները միանան գաղութների ճնշված ժողովուրդների հետ և պայքար մղեն կապիտալիստների ու կալվածատերերի դեմ։ Այդպես եր ասում էնինը։

Կոմունիստական ինտերնացիոնալը, այսինքն՝ աշխարհի կոմունիստական կուսակցությունները՝ գնում են լենինի ցույց տված ճանապարհով։ Իսկ լենինն ասում եր, վոր կոմունիստական ինտերնացիոնալի քաղաքականության եյությունը ազգային և գաղութային հարցերում պետք ե կազմի բոլոր ազգերի ու յերկըների պլոյետարիատին ու աշխատավոր մասսաներին մերձեցնելը, վորպեսզի սրանք միասին հեղափոխական կովով տապալեն կալվածատերերին և բուրժուազիային։ Վորովհետև միայն այդ տեսակ մերձեցումն ե ապահովում կապիտալիզմի վրա տարվելիք հաղթանակը, առանց վորի ազգային ճնշումն ու անհավասարությունը վոչնչացնել անհնարին ե։

Լենինը ոսւս բանվորներին և գյուղացիներին, սովորեցնում եր չմոռանալ ճնշված ազգերին։ Նա ասում եր. «Գոյության պայքարի, մի կտոր հաց ձեռք բերելու վախի և վրդովմունքի մեջ ոսւս բանվորներն ու գյուղացիք չեն կարող և չպետք ե մոռանան ազգային այն ճնշումը, վորի տակ գտնվում են Ռուսաստանում բնակվող տասնյակ և տասնյակ միլիոն «այլազգիներ»։

Միևնույն ժամանակ Լենինը սովորեցնում եր ճնշված ժողովուրդների աշխատավորությանը՝ չխարվել իր սեփական ազգային բուրժուազիայից։ Այդ բուրժուազիան, ինչպես և ոսւս բուրժուազիան, կամենում ե բանվորներին և գյուղացոց խաբել—ասում եր լենինը։

Ազգային բուրժուազիան համոզում ե իր ազգի բանվորներին և գյուղացոց, վորպեսզի նրանք իր յետերց

գնան, իսկ ոռւս բանվորին և գյուղացուն ատեն: Ազգային բուրժուազիան աշխատում է համոզել և հավատացնել, վոր բոլոր ոռւսները—ոռւս բանվորը, ոռւս գյուղացին, ոռւս գործարանատերն ու ոռւս թագավորը նրանց ազգային թշնամիներն են:

«Մենք, պրոլետարիներս,—ասում եր Լենինը,—տառնյակ անգամ տեսել ենք, թե ինչպես բուրժուազիան դաշվաճանում է ազատության, հայրենիքի, լեզվի և ազգի շահերին, յերբ նրա դեմ դուրս է գալիս հեղափոխական պրոլետարիատը»:

Միթե մեզ հայտնի չէ, վոր բուրժուազիան՝ ամեն անգամ, յերբ բանվորներն ու գյուղացիք հեղափոխություն են անում, իսկույն հրավիրում է ոտար յերկրների գորքը, վորպեսզի ոտարի սվիններով իր յերկողի, իր ազգի բանվորներին և գյուղացոց իրեն հնագանդեցնի:

Այդպես, որինակի համար՝ վարվեց Ուկրայինայի բուրժուազիան, յերբ բանվորներն ու գյուղացիք ապրատամբվեցին: Ուկրայինական բուրժուազիան մեկ ծախվեց Գերմանիային, մեկ Ֆրանսիային և մեկ ել ոգնության հրավիրեց լեհերին: Նույնը արին նաև վրացիք, յերբ ոգնության կանչեցին Անգլիայի իմպերիալիստներին կըռվելու իրենց բանվորների և գյուղացիների դեմ: Իսկ վերջին որերին, յերբ Կարմիր բանակը վրացի բանվորների և գյուղացոց հետ միասին դեպի Սև ծով եր քշում վրացական բուրժուական սպասավորներ մենշևկներին, վերջինները թուրքերին հանձնեցին Բաթում քաղաքն ու բերդը, վորպեսզի դրանք բանվորա-գյուղացիական կառավարության ձեռքը չընկնին: Իսկ Հայաստանում միենույն բանը չարի՞ն դաշնակները, վոր հայ բուրժուազիայի և իմպերիալիստների լակեյներն եյին: Յերբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիք ապստամբեցին դաշնակների դեմ և առաջ անցան դեպի Յերևան, դաշնակները, վոր կովում եյին

թուրքերի դեմ «մեծ» Հայաստանի համար, թուրքերին հանձնեցին և Ղարսը, և Ալեքսանդրովոլոր, և Ղարաքիլիսան: Թե ինչքա՞ն գյուղացու և բանվորի կյանք կարձացավ այդ որերին, վոչ վոր չի կարող հաշվել:

Հենց վոր Ռուսաստանի բանվորները իրենց ձեռքը վերցրին իշխանությունը, Խորհրդային կառավարությունը հայտարարեց բոլոր ազգերի ազատություն: 1917 թվի նոյեմբերի 2-ին հրատարակվեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան»*): Այդ դեկլարացիան ստորագրել են ընկ. Լենինն ու ընկ. Ստալինը: Այստեղ ասված ե, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը նպատակ է զրել ազատել բոլոր ճնշվածներին: Գյուղացիք ազատում են կալվածատերերի լծից, բանվորները՝ գործարանատերերի, զինվորներն ու նավաստիները՝ միապետական գեներալների լծից: Հարկավոր ե, վորպեսզի անմիջապես ազատագրվեն Ռուսաստանի նաև բոլոր մյուս ժողովուրդները, վոր կրում եյին ամեն տեսակի զրկանք և արհամարհվում եյին: Ազգերի այդ ազատությունը պիտի կյանքում կիրառվի վճռական կերպով և անմիջապես:

Դեկլարացիայի մեջ ասված ե, վոր նոր կառավարությունը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հավասարությունը ճանաչում ե: Ամեն մի ժողովուրդ իրավունք ունի այսորվանից վճռել իր բախտը: Յեթե նա ցանկանում ե, կարող ե իրեն համար նոր առանձին պետություն կազմել: Վոչ մի ժողովուրդ, վոչ մի կրոն սրանից հետո իրավունք չունի վորեւ արտոնություն կամ առավելություն ունենալու: Բոլոր ազգային փոքրամասնությունները, վոր ապրում են նախկին ցարական Ռուսաստանում, պիտի հնարավորություն ունենան ազատ զարգանալու:

Այդ դեկլարացիան միայն թղթի վրա չմնաց, և վոչ ել միայն խոստում: Խորհրդային իշխանությունը վոչ

*) Դեկլարացիա—հայտարարություն:

միայն հայտարարեց ազգերի հավասարություն, այլ և ամեն կերպ աշխատեց և ամեն միջոց ձեռք առավ, վորպեսզի ազգերի հավասարության գործը կյանքում իրականացնե: Ռուսաստանի ժողովուրդների մեծ մասը, շնորհիվ ցարական կառավարության քաղաքականության, շատ յետ եր մնացել: Հարկավոր եր՝ նախ և առաջ՝ ստեղծել այսպիսի պայմաններ, վորպեսզի այդ ժողովուրդները կարճ ժամանակամիջոցում կարողանան հասնել ռուսներին և մյուս կուլտուրական ազգերին: Այդ վոչ թե միայն տնտեսական հարցերում, այլ և քաղաքական ու կուլտուրական: Ահա թե ինչ վորոշեց Համամիութենական Կոմունիստական Կուսակցության տասներորդ համագումարը.

«Այժմ յերբ կալվածատերերն ու բուրժուազիան տապալված են, կառավարության նպատակն ե վոչ-ուստ աշխատավոր մասսաներին ոգնելու, վոր հասնեն կենտրոնական Ռուսաստանին և կարողանան 1) զարգացնել և հաստատուն դարձնել իրենց մոտ Խորհրդային իշխանությունը այն ձեւով, վոր համապատասխանե այդ ժողովուրդների ազգային-կենցաղային պայմաններին, 2) իրենց մոտ զարգացնել և հաստատուն դարձնել մայրենի լեզվով դատարանը, ադմինիստրացիան, տնտեսական որդանները, իշխանության որդանները, վոր կազմված են տեղական կենցաղին և տեղական ժողովրդի հոգեբանությանը ծանոթ, տեղական մարդկանցից, 3) իրենց մոտ զարգացնել մամուլը, դպրոցները, թատրոնը, ակումբային գործը և ընդհանրապես կուլտ-կրթական հիմնարկությունները մայրենի լեզվով»...

Համամիութենական Կոմունիստական Կուսակցության XII համագումարը նորից քննեց ազգային հարցը: Այս անգամ ևս ինդիբը դրվել եր այն ձեռվ, թե արդյոք ի՞նչ նոր միջոցներ են հարկավոր, վորպեսզի բոլոր ժողովուրդներն ել իրապես ստանան ազգերի հավասարություն:

Այս համագումարին մի ավելորդ անգամ կրկնվում ե, վոր ուստ պրոլետարիատը իրապես և յերկար ժամանակ պիտի աջակցե Միության հետամնաց ժողովուրդներին՝ թե տնտեսական և թե կուլտուրական գործում: Առաջին հերթին հարկավոր ե, վոր ուստ պրոլետարիատը մի շարք գործարաններ կենտրոնական նահանգներից տեղափոխի դեպի այն Խորհրդային հանրապետությունները, վորտեղ առաջ արդյունաբերություն չկար, վորտեղ ապրում են նախկին ձնշված ժողովուրդները: Հարկավոր ե, վորպեսզի այդ գործարաններում աշխատեն տեղացիք, վոր հետագայում կարողանան իրենք կառավարել: Նույն համագումարում ընդունվեց բանաձև, վորի մեջ առաջարկվում ելին մի շարք նոր միջոցներ, վորոնց շնորհիվ կարելի յեր Միության ժողովուրդների ազատ զարգացումը ապահովել: Վորոշումներից մեկում ասված ե, վոր հարկավոր և հրատարակել այնպիսի որենքներ, վորոնք մայրենի լեզվի գործածությունը ապահովեն մանավանդ տեղական և ազգային ազգաբնակչությանը սպասավորող պետական բոլոր որդաններում և հիմնարկություններում, այնպիսի որենքներ, վորոնք հեղափոխական խստությամբ պատժեն ազգային իրավունքները և մանավորապես՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները խախտողներին:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Վա՞ր յերկրներն են կոչվում գաղութային:

Հեղափոխությունը ամբողջ աշխարհում հաղթելու համար ինչո՞ւ յե անհրաժեշտ, վոր զաղութները ազատազրկեն:

Ի՞նչ և անում Խորհրդային իշխանությունը նրա համար, վոր մեզ մոտ ազգերի հավասարություն լինի:

Ճնշված ժողովուրդները լավ հասկացան և գնահատեցին Խորհրդային իշխանության քաղաքականությունը՝ Նրանք տեսան, վոր միայն պրոլետարիատն և իրենց բարեկամը, վորը նրանց ազատեց անսանձ ճնշումից ու շահագործումից, և վորը ոգնում է նրանց տնտեսական և կուլտուրական բարգավաճմանը։ Մենք ասացինք սկզբում, վոր Խորհրդային իշխանությունը իր գոյության առաջին իսկ որից հայտնեց, վոր ժողովուրդները կարող են իրենց համար նոր կառավարություններ ընտրել, վոր նրանք կարող են հեռանալ, բաժանվել Ռուսաստանից։ Զի անցնում մի յերկու-յերեք տարի, յերբ նախկին ճշնշված ժողովուրդները մեկը մյուսի յետևից դալիս են Ռուսաստանի Խորհրդային իշխանությանը միանում, կազմելով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։ Այստեղ, ուր տարածվում եր Ռուսաստանի կայսրությունը, այժմ ապրում են ժողովուրդներ, վորոնք ունեն իրենց Խորհրդային հանրապետությունն ու ավտոնոմ^{*)} շրջանները (21 հանրապետություն և 15 ավտոնոմ շրջան)։ Այժմ բոլոր ազգերը լավ գիտեն, վոր կապիտալիստական կառավարությունները նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին շատ հեշտությամբ կսորտակեն։

Ինչպես յուրաքանչյուր խորհրդային հանրապետություն չի կարող կապիտալիստներից առանձին պաշտպանվել, նա չի կարող նաև առանձին՝ միայն իր ուժերով վերականգնել տնտեսությունը։ Բոլոր խորհրդային հանրապետությունները պիտի իրար փոխադարձաբար ոգնեն։ Միայն այդ դեպքում նրանք կարող են հաջող կերպով կառուցել իրենց սոցիալիստական տնտեսությունը։ Առա-

^{*)} Ավտոնոմ շրջան—մի այնպիսի շրջան, վոր ունի իր սեփական որևէսպառությունը։

ջավոր ժողովուրդները ամեն կերպ կաջակցեն հետամնացներին։ Կոմունիստական կուսակցությունն ընդունում է, վոր ոուս պլրոլետարիատը պարտավոր ե ոգնել մյուս ժողովուրդներին, վորոնք թե՛ տնտեսապես և թե՛ կուլտուրապես հետ են մնացել։ Այժմ մենք սկսել ենք մեծ շինարարական գործ։ Մեծ գործարաններ ենք կառուցում այնտեղ, վորտեղ առաջ հին կառավարության մտքով անգամ չեր անցնում մի արհեստանոց հիմնել։ Բաց ենք անում բոլոր ազգերի համար իրենց հարազատ լեզվով գպրոցներ։ Վերջնականապես գործնականորեն վերացվում ե հին կարգերից մնացած՝ ազգերի անհավասարությունը։

Վորպեսզի Կոմունիստական կուսակցության քաղաքականությունը կյանքում իրոք անցկացվի, վորպեսզի ամեն մի ազգ կարողանա ավելի լայն չափերով զգալ իր հավասար իրավունքները, Խորհրդային բարձրագույն իշխանությունը այնպես ե կազմված, վոր հնարավորություն ե տալիս ամեն մի խորհրդային հանրապետության և ավտոնոմ շրջանին՝ մյուսների հետ հավասարապես իր շահերը պաշտպանել։ Համամիության կենտրոնացմանը յերկում ասից ե բարկացած։ Նրանցից մեկը՝ «Միության Խորհուրդը» ընտրվում ե Համամիութենական Խորհուրդի Համագումարում, մյուսը՝ «Ազգությունների Խորհուրդն» ե։ Այստեղ ամեն մի Խորհրդային հանրապետություն (անկախ նրա մեծությունից) ուղարկում ե 5-ական ներկայացուցիչ, իսկ ավտոնոմ շրջանները՝ 1-ական։ Կենտրոնացմանը հրատարակած ամեն մի որենք կարող ե կյանքում կիրառվել, յեթե նա ընդունված ե թե՛ Միության Խորհրդի և թե՛ ազգությունների Խորհրդի կողմից։

Այդպիսով, Ազգությունների Խորհուրդը ամեն մի ազգի իրավունքները հավասարապես պաշտպանում ե, անկախ այն հանդամանքից, թե ինչ մեծության ե այս կամ այն հանրապետությունը կամ ավտոնոմ շրջանը։

Ազգային փոքրամասնությունները, այսինքն այն ազգերը, վորոնք այս կամ այն հանրապետության մեջ փոքրամասնություն են կազմում, որինակի համար քրդերը, ասորիները հայաստանում,—առանձին որդաններով են կառավարվում։ Գործկոմներին կից գոյություն ունեն հատուկ բաժիններ, վորոնք զբաղվում են ազգային փոքրամասնությունների գործերով։ Որինակի համար՝ լուսավորության ժողկոմատին կից ազգային փոքրամասնությունների բաժինը։

Պատահում են դեպքեր, յերբ այս կամ այն ծառայողը կամ պաշտոնյան Խորհրդային հանրապետության ազգային քաղաքականությունը խեղաթյուրում ե։ Նրանցից շատերը դեռ մինչև հիմայել չեն հասկացել, վոր ազգային հին քաղաքականությունը այլևս չկա։ Կոմունիստական կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը միշտ կոիվ են մղում ազգային քաղաքականությունը այդ կերպ խեղաթյուրողների դեմ։

Մյուս կողմից ել՝ միքանի ժողովուրդների մեջ գոյություն ունի, գեռ մնացել ե անվատահություն դեպի մյուս ժողովուրդները, մանավանդ դեպի ոռւսները։ Խորհրդային իշխանության քաղաքականությունը, նրա տարած աշխատանքը պիտի ամրացնեն ազգերի յեղբայրության գործը, վոչնչացնելով անվատահությունը, թշնամությունը։ Բոլոր բանվորներն ու գյուղացիները պիտի լավ գիտենան, վոր նրանց թշնամիներն են՝ բուրժուազիան, կապիտալիստները, կալվածատերները, մի խոսքով—բոլոր շահագործողները։ Վերջիններիս թվին են պատկանում նաև տերտերները, մոլլաները, մի խոսքով՝ հոգեվորականությունը, վոր ամեն կերպ ոգնում ե շահագործողներին՝ մթության, խավարի, տղիտության մեջ պահել աշխատավորությանը, ազգերի մեջ թշնամություն սերմանելով։

Բոլոր յերկրների և ազգերի աշխատավորների նպատակը պետք է լինի՝ միացած ուժերով կռվել ընդհանուր թշնամու դեմ։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչու համար գոյություն ունի Ազգությունների Խորհուրդը։

Ի՞նչու ամեն մի բանվոր և գյուղացի ԽՍՀՄ մեջ պետք է պայքարե ազգերի հավասարության համար։

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԶՈՐՈՐՈՐԴ ԶՐՈՒՑՑՑ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

1. Յեթե ձեր գյուղում ազգային փոքրամասնություններ չկան, վերցը քարտեզը, գտեք մի այնպիսի շրջան կամ հանրապետություն, վորտեղ ապրում են ազգային փոքրամասնություններ, դիմեցեք ուսուցչին կամ մի այնպիսի մարդու, վոր կարողանա ձեզ պատմել նրանց մասին։

2. Յեթե ձեզ մոտ կան ազգային փոքրամասնություններ, ստուգեցեք, թե ինչ ե արված՝ նրանց կուլտուրական կյանքը բարձրացնելու համար։ Բջիջում դրեք գեկուցում՝ ձեր գավառամասում այդ ուղղությամբ կատարված աշխատանքի մասին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I - ԻՆ ՊՐԱԿԻ

Ա. Ա. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.	Ի՞նչպիս պետք է այս գրքից ոգտվել (մերոդական ցուցմունքներ)	62
Զ բ ու յ ց I.	ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ	3
» II.	Ո՞վ, ՅԵՎ, Ի՞՞ՆՉՊԵՍ Ե ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ԿՈՌՈՎԱՐՈՒՄ	11
» III.	ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ . . .	27
» IV.	Ա.ԶԳԱՑԻՆ ՀԱՐՑԸ, ՅԵՎ, Ի՞՞ՆՉՊԵՍ Ե ՆԱ. ԼՈՒԾ- ՎԵԼ ԽՍՀՄ ՄԵԶ	45
		62

II ՊՐԱԿԻ*)

Զ բ ու յ ց V.	ՄԵՐ Ա.ՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
» VI.	ՄԵՐ Ա.ՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԳԳՈ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
» VII.	ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ
» VIII.	ԿՈՒԼԱԿԻ, ՄԻՋԱԿԻ ՅԵՎ, ԶՔԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ
» IX.	ԿՈՈՓԵՐԸՑԻԸ

III ՊՐԱԿԻ*)

Զ բ ու յ ց X.	ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ
» XI.	ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ
» XII.	ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ
» XIII.	ԽՍՀՄ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐԸ



*) II և III պրակիներն են լույս են տեսական

ԳԻՆԵ 50 ԿՈԴ.



**ПОЛИТИЧЕСКИЕ БЕСЕДЫ
с КОМСОМОЛЬЦЕМ**
по В. ВИРГАНСКОМУ

На армянском яз.

Выпуск I.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва, Никольская, 10.

«Ազգային գրադարան



NL0187415

